Azg
Ազգ
Armenian daily
3 ՕԳՈՍՏՈՍ 1995. ՀԻՆԳՇԱԲԹԻ # 147 (901)

Երեկ Երեւանում սպանվեց երկու ոստիկան

ՀՀ ներքին գործերի նախարարության լրատվական կենտրոնի տեղեկ Վաչե Պետրոսյանը Նույյան տաղան գործակալության թղթակցին հաղորդել է, որ օգոստոսի 1-ին, ժամը 24-ի սահմանագծում հրազենով սպանվել են Երեւանի Մաշտոցի շրջանի ՆԳ բաժնին կից «Պահպանություն» միավորման երկու աշխատակից, մեկը ստացել է ծանր մարմնական վնասվածք: Նույն աղբյուրի հաղորդած տվյալներով, ճշված ժամին ստուգման նպատակով միավորման աշխատակիցները Երեւանի Լենինգրադյան փողոցում կանգնեցրել են ՎԱԶ 21-21 մակնիշի ավտոմեքենան, որի ուղեւորներից մեկը ավտոմատով կրակել է բացել: Արբաբ Խաչատրյանը մահացել է տեղում, Գրիգոր Հունանյանը հիվանդանոցում, իսկ Արսեն Պետրոսյանը վիրավորվել: Նախարարության աշխատակիցները, ըստ կենտրոնի տեղեկի, ձեռնարկել են օպերատիվ միջոցառումներ հանցագործներին հայտնաբերելու եւ ձերբակալելու համար: *ԼՏ*

ԵԱՀԿ-ՍՍՏ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ընտրությունների պաշտոնական թվերի ճշտությունը հարցականի տակ

1995 թվի օգոստոսի 2-ին ԵԱՀԿ-ՍՍՏ ընտրությունների հսկման համատեղ գործողությունների գրասենյակը հրապարակել է մի հաղորդագրություն, որ-տեղ անդրադառնալով հուլիսի 5-ի ընտրություններին եւ հանրաքվեի ընթացքին, ինչպես նաեւ նախընտրական արշավին, նշել է դրական եւ բացասական գծերը: Հաղորդման մեջ հատկապես ընդգծվեցին հանրաքվեի եւ համամասնական ընտրությունների վերաբերյալ հրապարակված պաշտոնական թվերի ճշտությունը: Այլ դիտողություններ հայտնելով հանդերձ, վերջում գրասենյակը ներկայացնում է 6 կետից բաղկացած խորհուրդներ, որոնք կնպաստեն ժողովրդավարության զարգացմանը: Գրասենյակի հաղորդագրությունն ամբողջությամբ կտպագրվի մեր թերթի առաջիկա համարներից մեկում:

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Նոր Գերագույն Հոգեւոր խորհրդի առաջին նստաշրջանը

Օգոստոսի 1-2-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 4 նիստից բաղկացած իր առաջին նստաշրջանը գումարեց Գերագույն Հոգեւոր խորհրդի նոր կազմը, որ նշանակվել էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից՝ Վեհափառ Հայրապետի ընտրությունից հետո, ըստ անցյալ տարիների ավանդության եւ Ազգային եկեղեցական ժողովի որոշման: Նկատի ունենալով, որ նոր Գերագույն Հոգեւոր խորհուրդը, որպես Ամենայն Հայոց կաթողիկոսի խորհրդատու մարմին, պիտի պաշտոնավարի մինչեւ առաջիկա Ազգային եկեղեցական ժողովը, որը նախատեսված է գումարել երկու տարի հետո, ինչպես նաեւ հաշվի առնելով, որ նախորդ շրջանից բազմաթիվ հարցեր դեռեւս մնում են լուծված, Վեհափառ Հայրապետը վերանշանակեց խորհրդի նախկին կազմը՝ ամենայն ուրախությամբ ամենապատիվ Տեր Թորգոմ պատրիարք Սանուկյանի եւ ամենապատիվ Տեր Գարեգին պատրիարք Գազանճյանի: Ինչպես տեղեկացրին Մայր Աթոռի մամլո դիվանից, նորին Սրբությունը խորհրդի լիազոր անդամ նշանակեց նաեւ արտասահմանյան երկրամասերից 4 թեմական առաջնորդների: Սույն ընդլայնված կազմը այսուհետեւ ժողով կգումարի տարին երկու անգամ: Առաջին նիստը նախատեսված է առաջիկա սեպտեմբերի վերջին:

Ներկա նստաշրջանը Վեհարանի դահլիճում բացեց Գարեգին Ա կաթողիկոսը՝ աղոթքից հետո տալով ընդարձակ զեկույց՝ իր ընտրությունից հետո կատարված աշխատանքների եւ ի հայտ եկած հարցերի մասին: Քննարկվեցին Հոգեւոր Ճեմարանի զարգացման, ներքին թե մերի վարչական կազմակերպման, Մայր Աթոռ Ս Էջմիածնի հետ թեմերի հարաբերության, Քրիստոնեության ընդունման 1700 ամյակի տոնակատարության կենտրոնական հանձնախմբի նշանակման, Մայր Աթոռի ներքին վարչական, տնտեսական եւ հավելական կացության, Սեծի Տանն Կիլիկիո Աթոռի հետ հարաբերության (զեկուցում Վեհափառ Հայրապետի կողմից), Իրիստոնեական դասաիրավության, ինչպես եւ որոշ թեմերից ներկայացված այլ հարցեր: *ԼՏ*

ՀՅԴ-ԳՐՈ

Գառնիկ Խաչատրյանը եւ Ասոն Ավետիսյանը հետախուզման մեջ

Վահան Հովհաննիսյանի Նոր-Արաշենի մեկուսարանում

Երեկ ազգային անվտանգության նախարարությունը հատուկ հաղորդագրությամբ տեղեկացրեց, թե հետախուզման մեջ են գտնվում Գառնիկ Սամվելի Խաչատրյանը (Գեւորգի նախկին դատապարտյալ, ծնված 1960 թ. Իրանում, բնակվում է Մասիսում) եւ Ասոն Քաջիկի Ավետիսյանը (ծնված 1950 թ. Արարատի շրջանի Դվին գյուղում, բնակվում է Երեւանում): ԱԱՆ-ը տեղեկացնում է հանրապետության բոլոր հարմարակներին, որ նշված անձանց մասին որեւէ տեղեկություն իմանալու դեպքում զանգահարեն 56-35-15, 52-92-96 եւ 58-11-62 հեռախոսահամարներով:

Միաժամանակ, ՌԱԲԿ գործակալության հաղորդման համաձայն, երեկ, օգոստոսի 2-ին, Վահան Հովհաննիսյանի մայրը այցելել է Նորաշենի թիվ 1 մեկուսարան, եւ մի քանի ժամ սպասելուց հետո, ժամը 13:30-ին վերջապես հայտնել են, թե իր որդին արդեն օգոստոսի 1-ից գտնվում է այդ մեկուսարանում: Նրա տարած սենյակներից եւ հագուստներ բերելու համար: Հայտնի է դարձել նաեւ, որ Վահան Հովհաննիսյանի դահանջած 2 փաստաբաններ հրաժարվել են խիստ ծանրաբեռնվածության պատճառով:

Փաստ գործակալությունը հաղորդում է, թե հուլիսի 29-ի առավոտյան Արարատի շրջանի Վեղի ավանում ձերբակալվել է տեղի բնակիչ Հայկազ Աբրահամյանը, որը ՀՅԴ անդամ է եւ 1988 թվականից մասնակցել է ազատագրական մարտերի մինչեւ վերջին լինելով զոհարտակի հրամանատար: Փաստը նշում է, որ առայժմ Աբրահամյանին պատշաճ մեղադրանք չի ներկայացվել, սակայն հարազատներին տեղեկացրել են, որ նա առնչվում է հուլիսի 29-ի գիշերը վնասազերծված ահաբեկչական խմբին: Ակզում նա եղել է Նորաշենի կալանավայրում, ապա տեղափոխվել ԱԱՆ-ի մեկուսարան:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Խաղաղամտություն, թէ՞ զանազամտություն

Մեր նախորդ համարներից մեկում անդրադարձել էինք ՀՀՇ գաղափարախոս Է. Եգոյանի «Հայաստանի Հանրապետություն» թերթում հրապարակած հարցազրույցին, որտեղ հոխորտալով ընտրություններում մեր դաշնակցական կուսակցությունների՝ ՀՅԴ-ի եւ ՀՅԴ-ի կրած ձախողության աթոռի, հոգի դասեր էր տալիս իր դրանով իսկ ազգային միասնության, տիպուսֆ-հայրենիք համախմբման առաջ բացված «նոր» հեռանկարների մասին: Բնականաբար, նկատի ունենալով նրան զգալուն լինելը եւ արժարժված տեսակետների վստահելիությունը, չէր ուզենալու դասախոսանը: Խմբագրությունն արդեն ստացել է մի շարք հոդվածներ, որոնցից առաջինը տեղ ենք տալիս տիպուսֆահայ հասարակական-քաղաքական հայտնի գործիչ Ե. Ազատյանի գրությանը: Այս աթոռի հիշեցնենք նաեւ, որ դեռեւս 1991 թվականի վերջերից Է. Եգոյանը գլխավոր «ճարտարապետն» է եղել ՀՅԴ-ՀՀՇ երկխոսության փորձերի ձախողմանը, ինչպես նաեւ հետագայում ՀՅԴ-ի ներսում դասակտման սերմեր ցանելու աշխատանքին:



Հայաստանն ու հայ ժողովուրդը դարերով զգուշած են կայարիններու բախման կիրսկէին եւ կամ ծաւալող կամ ընկրկող նուաճողներու անցքի ճանապարհին եւ այդ դասնաան կոտրուած ու ջիգուած են միշտ օտարներու ձեռքով: Մեր ժողովուրդը նուաճող եւ անոր բնաջնջող լոյսի ուժերուն համար ձեռնտու եղած է բաժնուած ու տկար դրսեւել մեր երկիրն ու ազգը: Դեռեւս չորրորդ դարուն Բիւզանդիոնն ու Պարսկաստանը Հայաստանը բաժնելով իրենց մէջ կը ձգտին ծալել հայրիրենը այդ երկու հսկայորդէն կայարիններուն բնակչութեանց հուրային մէջ, երբ եկաւ Մեսրոպեան հանճարը իր այբբենին ուժով միացնելու եւ, խորհին մէջ, տանելու խաղաղական յաղթանակ մը, որուն տարոյցներ մինչեւ այսօր կ'անդրադառնայ մեր ժողովուրդի ճակատագրին վրայ:

Անկարող է խօսիլ յայտարարական դարերու ոգեւորութեանց ու կոտրակումներուն մասին, որոնք ի վերջոյ յանգեցան 1915-ի գեղասպանութեան եւ Արեւմտահայաստանի կործանման: Եւ եթէ Քազմ Քարաբեմիր յայտնած լլլար իր նոյնակին մէջ, այսօր միեւնոյն տխուր վիճակին մատնուած ոչ-տի լլլար նաեւ Արեւելահայաստանը կրկնապատկելով մեր ցեղին վիճակուած ոգեւորութիւնը: Բարեբախտաբար խարբերդիներ ու մուսաղեռ Ռմպլներ չյաջողեցան ամբողջացնել իրենց հայակործան ծրագիրներ եւ մնաց բախտաւորութիւնն ունեցաւ մեր դասական մասնակի ու փոքրիկ մնաց խորհուրդին վրայ հայրենիք մը ունենալ, որ վերջին 80 տարիներուն բազմաթիւ վերիվայրումներ ապրեցաւ եւ, այսօր կը զգուի իմնակերտումի իմնուրոյն զարգացման ճանապարհին վրայ: Այնպէս ինչպէս Արեւմտահայաստանի կորուստ ոգեւորութիւնն է ամբողջ հայ ժողովուրդին, նոյնպէս Արեւելահայաստանի վերջերին բախտաւորութիւնը ոչէ է նկատել մեր համայն ազգին:

Ուրեմն, երբ հայ ժողովուրդի բնաջնջումներուն համար ձեռնտու է բաժնել ու կոտրակել մեր ազգը, ամէն հայրենասիրական իսկ հանգոյցներու ոչիսի լայնայ ձգտել մեր ժողովուրդի միասնականութեան: Արդիսկ գնալու համար դիւանագիտական անգամ կարիք չունիք, ոչ ալ քաղաքական Ղարեցի ծանօթ դասգանը թէ. «Հայ ժողովուրդ, ի միակ վիրաբերը ի միասնականութեան մէջ է»:

Այսքան տարական դասաբերին չունեցող կամ նոյնիսկ մարդու եւ հայու բնագդ չունեցող անձը իսկապէս կարիքն ունի ախատաբանական ճնեռաբեան մը: Տես էջ 4

Վրացիները ծեծել են թուրք լրագրողների

Ինչպես հաղորդում է թուրքական մամուլը, հուլիսի 31-ին Թբիլիսի եւ Վրաստանի սահմանադրության բացման արարողության ժամանակ, որին ներկա են եղել Դեմիրելը ու Շեւարդնաձեն, տեղի ունեցավ ցավալի միջադեպ: Երբ թուրք լրագրողներն անցան Վրաստանի սահմանը, նրանք ենթարկվեցին վրաց ոստիկանների եւ անվտանգության մարմինների ներկայացուցիչների հարձակմանը: Ոստիկանները մարմնական վնասվածքներ են հասցրել երեք լրագրողի: «Ոչ ոք չմիջամտեց այս միջադեպին, որը պատահեց երկու երկրների ղեկավարների ներկայությամբ», նշում են թուրքական թերթերը: *ԼՏ*

ԲԱԼԿԱՆՆԵՐ

Խորվաթների 100 հազարանոց բանակը սպառնում է սերբերին

Սերբերի առաջնորդ Ռադովան Կարաջիչը դիմել է աշխարհի մեծ տերությունների ղեկավարներին եւ ժողովուրդներին խնդրելով կանգնեցնել խորվաթների կողմից իրականացվող կռվանական սերբերի եղեռնը: Խորվաթները կռվանական սերբերի հետ սահմանագծում կենտրոնացրել են 100 հազարանոց բանակ, որի հարձակմանը պատրաստ է դիմագրավել 50 հազարանոց սերբական բանակը: Հավանական պատերազմական գործողության մեջ կարող են ներքաշվել շահագրգիռ երկրներ, որոնք հոգ է երդում համաշխարհային պատերազմի բռնկման վտանգով:

Երեկ ԵԱՏՕ-ի հրամանատարությունը հաստատեց սերբերի դիրքերի ռմբակոծման պլանը: *Ա. Ա.*

Բազմահազարանոց հանրահավաքներ Թեհրանում ի պաշտպանություն Բոսնիայի մահմեդականների

Հուլիսի 31-ին Իրանի արտաքին գործերի նախարար Վելայաթին Սարանդամը Բոսնիայի եւ Հերցեգովինայի նախագահի հետ ունեցած հանդիպման ժամանակ հայտնեց տեղի մահմեդականներին բոլոր միջոցներով օգնության ցույց տալու եւ սատար կանգնելու Իրանի պատրաստակամության մասին: Օգոստոսի 2-ին հոգեւոր առաջնորդ Խոմենիի Իրանի ժողովրդին նախորդ առած կոչի համաձայն, ինչպես հայտնում է Իրանի ռադիոն, Թեհրանում տեղի են ունեցել բազմահազարանոց հանրահավաքներ: Մարդկային բազմությունը գրավել էր ՄԱԿ-ի ներկայացուցչության շենքին հարող տարածքները: Հավաքվածներն իրենց բողոքի ձայնն էին բարձրացրել ի պաշտպանություն Բոսնիայի եւ Հերցեգովինայի, մահմեդականների ՄԱԿ-ի լռության դեմ: Թեհրանի ազգային կենտրոնական բանկում Բոսնիայի եւ Հերցեգովինայի մահմեդականներին օգնության ցույց տալու նպատակով հատուկ հաշիվ է բացվել: Ռադիոյի համաձայն, միջոցառման նպատակն էր ոչ միայն մասնակցել աշխարհի հանախմբել հարգելի Բոսնիայի եւ Հերցեգովինայի մարտիկներին եւ ցույց տալ ամբողջ աշխարհին, որ նրանք մենակ չեն իրենց դժբարում: *Ա. Ա.*

digitised by A.R.A.R.@

տեղական

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

ՀՈԱԿ ՀՎ երեք անդամ ընդդեմ Ռուբեն Միրզախանյանի

ՀՈԱԿ Հանրապետական վարչության անդամներ Լեւոն Բաբայանը, Ռաֆիկ Պետրոսյանը եւ Մելս Սամվել Սահակյանը երեկ հանդես են եկել մի հայտարարությամբ, որում մասնավորապես ասվում էր, թե ՀՈԱԿ-ը «վերջին մեկ-երկու տարում իր ղեկավարի՝ կուսակցության Հանրապետական վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանի անհեռատես, անհավասարակշիռ քաղաքականության, եսասեր ու պատվամոլ վարքագծի, հանրապետությունում տեղի ունեցող իրադարձություններն անտեսելու եւ քաղաքական կյանքում կուսակցությանն իսկապես «չորեքթաթ» վիճակի մեջ դնելու հետեւանքով ոչ միայն հեռացել է իր բուն գաղափարախոսական կանխադրույթներից, ընդհուպ ձեռնամուխ չի եղել դրանց գործնական իրացմանը, այլեւ զանազան մտացածին պատճառաբանություններով անիրական անհաշտությունների մեջ է մտել իշխանության գրեթե բոլոր թեւերի, հանրապետությունում գործող գրեթե բոլոր կուսակցությունների հետ, դարձել է երկրում հաստատվող Սահմանադրության հակառակորդ, հետեւաբար եւ իր իսկ գաղափարախոսության գերեզմանափոր: Հենց Ռ. Միրզախանյանի մենաշնորհ վարքագիծն էր պատճառը, որ կուսակցությունը Աժ-ի ընտրություններում կրեց խոշոր պարտություն, թեկուզ եւ ընտրությունները անցան ոչ արդարացի ձեւով»:

Այնուհետեւ հայտարարության հեղինակները նշում են, թե կասեցնում են Հանրապետական վարչության անդամի իրենց գործունեությունը, քանի դեռ այն ղեկավարում է Ռ. Միրզախանյանը, եւ պահանջում են հրավիրել արտահերթ համագումար:

Հիշեցնենք, որ հուլիսի 5-ին հայտարարության հեղինակները մասնակցել են մեծամասնական ընտրություններին եւ նույնպես կրել պարտություն:

«Աֆղանցիները» 3-րդ անգամ նշեցին իրենց տոնը

Երբ Հայաստանի սահմաններում դեռ չէին պայթում պատերազմի արկերը եւ դեռեւս չկար հարեւան երկրի հրոսակներից հայրենի օջախը զենքով պաշտպանելու խնդիրը, խաանամյա հայ պատանիները պատերազմի մեջ էին հեռավոր Աֆղանստանում: Հայ նորագույն ազատագրական շարժման օրերին հենց այդ տղաներն էլ որպես մարտերում կոփված զինվորներ, կազմեցին հայկական ինքնապաշտպանական ջոկատների կորիզը: Նրանցից շատերն այսօր էլ չեն լքել Հայաստանի բանակի շարքերը, ծառայում են անկախ պետության սահմանամերձ գոտիներում:

Օգոստոսի 2-ին Հայաստանի «Աֆղանցի» մարտիկներն արդեն երրորդ անգամ նշեցին իրենց տոնը: Նրանք ծաղկեպսակ դրեցին Աֆղանստանում զոհված հայ մարտիկների հուշարարին: Դրանից հետո վետերանների համար նախատեսվում էր համերգ մարզահամերգային համալիրում:

«Ոչ ոք եւ ոչինչ չպետք է մոռացվի, ասում է աֆղանական պատերազմի մասնակիցների հայկական հանրապետական ընկերության փոխնախագահ Բաբկեն Նազարյանը, քանի որ եթե մոռանանք Աֆղանստանում զոհված հայ տղաներին, վաղը կարող ենք մոռանալ նաեւ այսօրվա ազատամարտիկներին»:

ԱՐԳԻՇ ՍԱՐՏՈՍՅԱՆ

ՀԱՆԳԻՊՈՒՄ

Չկայացած երկխոսություն կանանց հիմնահարցերի շուրջ

«Շամիրամը» ապառնաց փոխել «Ազգը»

Ժողովրդական տանը օգոստոսի 2-ին հրավիրված «Կանանց հիմնահարցերի լուսաբանումը զանգվածային լրատվության միջոցներով» խորհրդակցի երկխոսությանը դպրահաբար ներկա գտնվեցին նաեւ մենք: Մի խումբ մասնագետ կանանց՝ Նորա Հակոբյանի, Հրանուշ Հակոբյանի եւ այլոց ներկայությունը հույս էր ներշնչում, որ հատկապես մեզ լրագրողներիս համար ցանկալի երկխոսությունը կկայանա: Մանավանդ որ ասելիք շատ ունեինք, եւ առաջին հերթին այն մասին, թե ինչպանով են հասկացված լրագրողներիս այդ հիմնախնդիրները լուսաբանման հարցում: Բայց, նախ այն մասին, որ լրագրողներին պարտավոր էին նախապես ծանոթացնել ենթակվող հարցին, որպեսզի անդրադառնաս չներկայանային: Չգիտես ինչու, այդ ամենակարեւոր մասը բաց էր թողնված, ուստի նախաբաններից կոնկրետ թեմային անցնելը շատ էր դժվարանում: Երկխոսությունն ծավալելու առաջին քայլը կատարեցին ավագները՝ ազգագրագետ Հրանուշ Խաչատրյանը ներկայացրեց «Կանանց երկխոսություն» կազմակերպության ծավալած աշխատանքները եւ առաջիկա անելիքները: Նորա Հակոբյանը խոսեց կանանց առաջընթացի համար պայքարում կատարած աշխատանքների մասին, հայտնելով, որ Պեկինի խորհրդաժողովում հետամուտ կլինեն, թե նայրոբյան ստատեգիայի նորմերը որքանով են իրագործվել Հայաստանում: Տիկին Հակոբյանը շամիրամուհիներին իբրեւ պատգամավորների ներկայացրեց «Առագաստ» թերթի հոդվածներից մեկը, որն ամբողջությամբ նվիրված էր կանանց հիմնահարցերին. «Ձեզ սիրելով, գուցե մեզ էլ սիրեն», բարեմաղթեց նա:

Դեռեւս չսկսված երկխոսությունն ընդհատեց «ամենահեղինակավոր» կանանց կազմակերպության «Շամիրամի» նախագահը մեկ անգամ եւս ի լուր բոլորի հիշեցնելով «Շամիրամի» տարած փառահեղ հաղթանակի մասին. Ազգային ժողովում աղահովել են 8 մանդատ, 2 մանդատ էլ վստակել է Կանանց համահայկական միությունը: Չնայած դրան մյուսներին խորհուրդ տվեց չխոսել «անտի» եւ «դրդ» կանանց կազմակերպությունների, մանդատների ձեռքբերման ուղիների եւ այլնի մասին: Փոխարենը «Շամիրամի» նախագահ Գայանե Սարուխանյանը հաշվեհարդարի ձեւով անդրադարձավ նախընտրական շրջանում իրենց կազմակերպության վերաբերյալ մամուլում տեղ գտած հրապարակումներին, հատկապես «Ազգ» օրաթերթին եւ «Գոլոս Արմենիին», որոնք այնի են ընկել «անճաշակ ու անհիմն» հայտարարություններով, մոռանալով, որ այդ ամենի հիմքը հենց իրենք են տվել: Բոլորի համար անսպասելի տիկին Սարուխանյանն, այժմ արդեն ինքնավստահ տոնով, խոսացավ պատգամավորական մանդատն առաջին անգամ գործածել «ազգի օգնությամբ վտխելու «Ազգ» թերթը եւ ազատելու այդ թերթը կուսակցական մանրախնդրություններից»:

Նորա Հակոբյանը հիշեցրեց, որ «Շամիրամը» խոսացել էր սեղանատերերին փոխել իր անունը, սակայն տիկին Սարուխանյանը հրաժարվեց, հայտարարելով. «Մի կարծեք, որ անունը փոխելով կազմակերպության բովանդակությունը կփոխվի, կամ էլ դրանից կանայք կդառնան ավելի բարոյական»:

Չկայացած երկխոսությունը մենք էլ ավարտենք այն նախադասությամբ, որը սրահում բարձրացած աղմուկի պատճառով չկարողացանք



ԵՐԵՎԱՆ

Արմեն Մազմանյանը ազատ է

1995-ի մայիսի 3-ից կալանքի տակ վերցված հայտնի արվեստաբան եւ ռեժիսոր Արմեն Մազմանյանը, Մյասնիկյանի շրջանային ժողովրդական դատարանի օգոստոսի 2-ի վճռով ազատ արձակվեց: Ժողովրդական դատարանի այդ որոշումը բուռն ցնծությամբ դիմավորվեց դռնքաց նիստին ներկա գտնվող տասնյակ քաղաքացիների կողմից: Նրանց վկայությամբ, դատավոր Մարաս Կատվալյանը վճիռը «ոչ այլ ինչ է, եթե ոչ այն բանի աղացույց, որ այսօր հանրապետությունում կարող է կայանալ արդար դատ»: Հիշեցնենք, որ Արմեն Մազմանյանը մեղադրվում էր ՀՀ քրեական օրենսգրքի թիվ 222 հոդվածի 3-րդ եւ թիվ 232 հոդվածի 1-ին մասով. այն է, համապատասխանաբար՝ առանձնապես չարամիտ խուլիգանությունը եւ զենքի ապօրինի կրումն ու գործածումը:

Երկօրյա դատական նիստի ընթացքում լսվեցին գործի մեջ ներգրավված վկաների, ինչպես նաեւ ամբաստանյալի ցուցմունքները, որոնց արդյունքում որեւէ կողմ չմեղադրեց Արմեն Մազմանյանին: Հենվելով նաեւ կատարված դատաբժշկական, դատաքննչական եւ փորձաքննության այլ եղանակների տվյալների վրա, Մյասնիկյանի ժողովրդական դատարանը Արմեն Մազմանյանին հանցավոր ճանաչեց ՀՀ քրեական օրենսգրքի վերոհիշյալ հոդվածներով, սակայն հնարավոր համարեց ՀՀ քրեական օրենսգրքի 41 հոդվածի կիրառումով «ամբաստանյալ Մազմանյանի նկատմամբ նշանակելի պատիժը (3 տարի ազատազրկում) պայմանականորեն չկիրառել, այն հետաձգելով 3 տարի փորձաշրջանով»: ամբաստանյալը ազատ արձակվեց հենց դատարանի դահլիճից:

Պատկերն ավելի ամբողջական դարձնելու նպատակով հարկ եմ համարում նշել, որ Արմեն Մազմանյանի արարքը իր բնույթով հարազատ է, օրինակ, Վիսոցկու կամ Բոդլերի, Եսենինի կամ Ֆրանսուա Վիյոնի «խուլիգանություններին», որոնց գլխավոր դատավորը եւ դատապարտյալը ժամանակն է: Այդ իսկ առումով Մյասնիկյանի ժողովրդական դատարանի գլխավոր նվաճումը, կարծում եմ, ճիշտ նույն ժամանակի շունչը որսալու մեջ է. մի բան, որը հազվադեպ է պատահում հատկապես մեր ժամանակներում:

Ուրախալի է:

ԱՐԻՍ ԴԱՎԹՅԱՆ

ՀՕՄ-ի գումարներն իրենց հասցեատերերն ունեն

Հայ օգնության միության երեւանյան գրասենյակում օգոստոսի 2-ին հրավիրված մամլո ասուլիսի պատճառը, ինչպես տեղեկացրեց ՀՕՄ-ի շրջանային վարչության ատենապետուհի Ալվարդ Պետրոսյանը, փոխհինչ «շահադիտական» նպատակ էր հետապնդում: Հայտարարվեց, որ օրերս են ՀՕՄ-ի կենտրոնական վարչության ատենապետուհի Վանուհի Իսաջանյանի հետ միասին վերադարձել ԱՄՆ կատարած այցելությունից եւ իրենց հետ բերել են բավական մեծ գումար, որը հայաստանցի ծնողազուրկ երեխաներին են ուղարկել նրանց արտասահմանցի խնամակալները: Ցանկանալով հաղորդակից դարձնել այդ փաստը, նրանք տեղեկացրին, որ դա թելադրված է Հայաստանում ծավալվող ներկայիս իրադարձություններով եւ վախ ունեն, թե գումարները նույնպես վտանգի կենթարկվեն: Ավելց նաեւ, որ գումարը նախապես գրանցվել է մամասանը: Նրա մի մասն էլ տրամադրվելու է Հայաստանի որբանոցներին: Սեպտեմբեր ամսից բոլոր որբանոցներում շաբաթական մեկ անգամ հայտարարվելու է ՀՕՄ-ի օր: Այդ օրը բոլոր հոմոհիները զբաղված կլինեն որբերով, նրանց կնամակարարեն տալ կերակուր:

Վանուհի Իսաջանյանը լրագրողներին տեղեկացրեց, որ ՀՕՄ-ը Հայաստանում բարեխղճությամբ անցել է մնայուն ծրագրերի իրագործմանը, որոնց մասն են կազմում ներկայումս ընթացող ջերմամեկուսացման աշխատանքները հանրապետության մի շարք շրջաններում, բոլոր ճշտական աշխատանք կատարեցան Գեղարքունիքի եւ Շամուշյանից արտագաղթած կանայք: Կրթական ծրագրերին օժանդակելու նպատակով Վանաձորում կնախաձեռնեն համալսարանի շենքի կառուցումը, իսկ մինչ այդ մոտ ժամանակներս Ավստրալիայի շրջկենտրոնում շահագործման կհանձնեն մոր եւ մանկական նախաձեռնությամբ հիվանդանոցի ժամանակակից կառույցը:

Ս. Պ.

Էլեկտրականության վարձի գանձման նոր համակարգ

«Հայաստանի որոշ շրջաններում, մասնավորապես էջմիածնում, Արմավիրում, Արարատում, արդեն անցել են էլեկտրաէներգիայի վարձի գանձման նոր համակարգի», հայտնեց «Հայէներգո» ձեռնարկության տնօրեն Գեւորգ Աղեկյանը: Գյուղի կամ մի խումբ շենքերի համար տեղադրվում է ընդհանուր հաշվիչ, որը գրանցում է այդ խմբի բոլոր սպառողների էլեկտրաէներգիայի սպառումը: Վարձը գանձվում է ըստ այդ հաշվիչի ցուցմունքների: Թե որքան է սպառում (եւ համապատասխանաբար՝ վճարում) յուրաքանչյուր առանձին տունը կամ բնակարանը՝ հարեւանները իրենք են որոշում: Այսպիսով, չվճարումների պատճառով անջատվում է միայն սպառողների ոչ մեծ խմբի էլեկտրասնուցումը, այլ ոչ թե ողջ բնակչության, ինչպես ներկայումս է: Արդեն կան դրական արդյունքներ: Ըստ Արարատի էլեկտրացանցի տնօրեն Բաջիկ Սաֆարյանի, չորս ամսվա ընթացքում էլեկտրակայանության վարձի վճարումը Արարատի շրջանի 16 գյուղերում, ուր ներդրվել է այդ համակարգը, 20 տոկոսից հասել է 95 տոկոսի: Այդ համակարգը բերում է էլեկտրաէներգիայի մեծ չափի խնայողություն: Մոտ ապագայում համանման համակարգ է ներդրվելու երկրաշարժի գոտում, քանի որ այդ գոտու բնակչության մեծ մասը առանց այն էլ չունի անհատական հաշվիչներ: Ըստ Գեւորգ Աղեկյանի, այդ մեթոդի համար անհրաժեշտ է սնուցման գծերը միացնել համապատասխան սխեմաներով, որոնք հնարավորություն կտան առանձնացնել այս կամ այն սնուցման հանգույցը, օրինակ՝ շենքերի մի խումբ: Այդ պատճառով խաղաթերում նոր համակարգին անցնելը կապված է որոշ դժվարությունների հետ: Մի կողմից, անհրաժեշտ են նման միացումներ: Այսպես կողմից՝ անհրաժեշտ է նաեւ նոր համակարգին անցնելու ցանկություն հայտնած քաղաքացիների համաձայնությունը: Բնակչության համար այդ մեթոդի առավելությունն այն է, որ ապագայում հանգույցի բնակիչները սեփական էլեկտրամատակարարումը օրական մինչեւ 24 ժամի հասցնելու հնարավորություն կստանան:

ԼՏ

Ցավակցություն

Սամվել, Շուշանիկ, Լեւոն, Երվանդ եւ Արայիկ Գասպարյաններ խորապես ազում են սիրելի եւ անմոռանալի Միհրան Տիգրանի Կոնեկյանի վաղաժամ մահը (որը պատահեց 31. 07. 95 թ. Լոս Անջելեսում) եւ ցավակցում են հանգուցյալի հարազատներին եւ ընկերներին:

Հանգուցյալը ծնվել է 1929 թ. Երեւանում (Բոքանիա), 1980 թ. տեղափոխվել Լոս Անջելես՝ 3063 Pinewood, CN. LA CRESCENTA CA 91214 հասցեում, հեռ. 18 18-957-65-84:

ՈՒՍԿՎՈՒՍ ԱՇԽԱՏԱՎԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Ինքնագիր եւ հրատարակչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագրություն
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեր 562941, AT&T (7 88521) 151065,
e-mail INTERNET: arg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագրի տեղակալ
ՍԱՄՎԵԼ ԴՈԼԱՆԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՍՊԱՐԳԻՍ ՍՊԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
Ոճը եւ տարածները ՊԱՌԵԼ ԳԱԼԱՓԵՆԻՆ
Apple Macintosh համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Գյումրի

Ժողովրդավարություն, թե՞... «ժողովրդավարություն»

Անցած ընտրությունների թեման շարունակում է մնալ ակտիվ խոսակցության առարկա: Որքան էլ տարբեր են գնահատականները, մի բանում համակարծիք են բոլորը, դրանք մեծ դաս էին հաղթական բոլոր ուժերի, ողջ հասարակության համար: Մեր թղթակիցը երկու հարցով դիմեց հանրապետության մի շարք կուսակցությունների Գյումրիի հաղթային կազմակերպությունների ղեկավարներին: 1. Ինչպե՞ս եք գնահատում հուլիսի 5-ի ընտրությունները ու դրանց արդյունքները: 2. Հետագա ի՞նչ խնդիրներ եք տեսնում մի կողմից իշխանությունների, մյուս կողմից հասարակական-հաղթական կազմակերպությունների առջև:

Վահան Թումասյան, ԱԺՄ. -Ճշմարիտն ասած՝ ինձ այնքան չեն մտահոգում այս ընտրությունների արդյունքները, որքան այն, թե ինչպիսին էր դրանց բուն գործընթացը: Եվ զավում եմ, որ ազգային զարթոնքի ալիքի վրա իշխանության եկած ներկա վարչախումբը առանց միջոցների մեջ խտրություն դնելու, ոչ դեմոկրատական ճանապարհով այսպես կոչված հաղթանակ առահովեց իր ճամբարում դասստղարվածների համար: Անշուշտ, այս ամենը իր խոր հետքն է թողնելու մեր ժողովրդի հավատի վրա: Խանգարելով հիմնականում ընդդիմադիր ուժերի խորհրդարան գալուն, այս վարչախումբը բույլ չտվեց, որպեսզի հաղթական դայքարը փողոցներից տեղափոխվի դարլամենտ:

Այլ բան է, որ այս ընտրություններ անելու բաղդատությամբ բոլոր հաղթական ուժերին դեմ է ստիպեն եզրակացություններ անել ու նաև ուշադրություն բեռեռել տարածաշրջանների վրա: Իշխանությունները դեռևս անցած-նախանցած տարի ստեղծելով ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչների ինստիտուտներ, թեկուզ եւ աղօրինաբար գրավեցին տարածաշրջանները, իսկ մի շարք կուսակցություններ միայն ընտրությունների նախաշեմին հանձնելով շրջաններ, միամտորեն կարծում էին, թե ձայն կբահեն: Հիմա կարծում եմ հիասթափվելու փոխարեն անհրաժեշտ է տրափվել եւ թույլ չտալ, որ այս իշխանությունները շարունակեն հանրաքվեությունը տանել բռնադեսական ճանապարհով: Հակառակ դարագայում սերունդները միայն նրանց չէ, որ մեղադրելու են:

Նորայր Սարգսյան, ԱԻՄ. -Գյումրիի բոլոր այն ընտրատարածքներում, որտեղ մենք ներկայացուցիչներ ենք ունեցել, արձանագրվել է, որ ընտրությունները անցկացվել են խախտումներով, աղօրինություններով, մարդու (մասնավորապես ընտրողի) իրավունքների ոտնահարումով: Իշխանության մարդիկ օգտագործել են բոլոր միջոցները, որպեսզի խեղաթյուրեն փաստերը հօգուտ իրենց: ԱԺ ընտրությունները կրկին համոզեցին, որ Հայաստանը դեռ շատ հեռու է իրավական պետություն լինելուց, նրա սկզբունքներից: Այս ընտրությունները այսօրվա իշխանավորների դեմը ժողովրդավարության ճոճի տակ բարգելու անհաջող փորձ էին: Մինչդեռ մախսոր դարկում չես բարգելի:

Ես համոզված եմ, որ արդարությունը դիտի հաղթանակի ժողովրդի շնորհիվ: Արդար Հայաստան, օրենքի պետություն դառնալու համար յուրաքանչյուրս մեր արժանապատվությունը դիտի վերականգնենք, սաստ կանգնենք մեր հայրենիքին, մեր հողին: Այդ նպատակին դիտի ծառայեն նաեւ իշխանությունները: Վերջիններս մտածում են միայն հարստանալու մասին: Իսկ հասարակական-հաղթական կազմակերպությունները, եթե նրանց նպատակը արդար ու հզոր Հայաստան ունենալն է, դիտի կարողանան համախմբվել այդ գաղափարի շուրջ: Կարծում եմ, դիտի ձգտել ամենազդական փոփոխությունների, որպեսզի, ասենք, գյումրեցիներն իրենք կարողանան ընտրել իրենց ղեկավարներին, ճիշտ ընտրություն կատարել:

Էմիլ Կիրակոսյան, ՀԿԿ. -Ընտրական օրենքը ուշացումով ընդունվեց, ու մինչեւ ընտրությունները հիշ ժամանակ էր մնացել նախապատրաստական աշխատանքներ կազմակերպված անցկացնելու համար: Քաղաքում ընտրատարածքների քարտեզից մինչեւ դռածո նախագահների ընտրությունը կատարվեց ոչ գիտական մակարդակով: Եղավ տեղամասերի անհավասարաչափ բաշխում, կար եւ 700 ընտրողով, եւ մոտ 4000 ընտրողով տեղամաս: Նույնը եւ ընտրատարածքներում: Հանձնաժողովների նախագահների ընտրությանը մասնակցելուց, իսկ հետո ընդհանրապես այդ հանձնաժողովներին անդամակցելուց արհեստականորեն զրկեցին հասկանալ ընդդիմության ներկայացուցիչներին նրանց տեղյակ չդարձնելով նշանակվող նիստերի մասին: Այս ամենը հիմք էր հետագա բոլոր խախտումների համար (բարկումը երկար է), որոնք շատ էին նաեւ ընտրությունների ընթացքում սկսած աննօրինական տեղեկանքներով տարբեր տեղամասերում քվեարկելուց, ընտրության օրն ավելված քարոզչություն ծավալելուց եւ ընտրողներին կաշառելուց մինչեւ վերջիններիս վրա կոպիտ ճնշում գործադրելը: Մանավանդ որ վաղ քարոզարշավի ընթացքում մարդկանց 80 տոկոսը չգիտեր քվեարկելու ձեւը:

Քաղաքային ընտրությունների մասին օրենքը խախտվեց, ոտնահարվեց: Դրանից էլ բխում էին ընտրության արդյունքները համապատասխան գնահատականով: Այն թեկնածուները, որոնք նախատեսված էին դեռ սկզբից, ցուցակով, բոլորն էլ անցան: Նրանցից ոչ մեկը, բացի Վարազդատ Ավոյանից, տեղական հեռուստահարցումը կամ ռադիոյով նախընտրական ելույթ չունեցավ, այնքան վստահ էին, որ կանցնեն...

Դանիել Վարդանյան, ՀՀՇ (փոխնախագահ). -Մեր կարծիքով, անցկացված ընտրությունները կարելի է գնահատել բավարար, եթե հաշվի առնենք, որ դրանք առաջին անկախ, ազատ եւ բազմակուսակցական ընտրություններն էին: Առաջին հերթին գոհունակությամբ ենք նշում մեր ժողովրդի ակտիվ մասնակցությունը: Որքանն այս չորս տարիներն իզուր չեն անցել: Չենք ասում, թե ընտրությունների ընթացքում խախտումներ չեն եղել: Բայց դրանք նաեւ փորձի դպրոց, ընտրողների այդպիսի հոսքին անդամագրաս լինելու, ինչո՞ւ չէ, նաեւ մեր ժողովրդավարական մտածելակերպի ու հոգեբանության այսօրվա մակարդակի արդյունք են: Անշուշտ, հաջորդ անգամ ամեն ինչ առանց մի քանի քայլ առաջ կլինի:

Ընտրությունների արդյունքները մեզ գոհացնում են, իսկ վերջնական մեր կարծիքը կերեւա, երբ ընտրվածներն Ազգային ժողովում աշխատեն: «Հանդարտություն» միավորման հաղթանակը նաեւ մեծ դատասխանատվություն է դնում մեր առջեւ: Միավորումը, ներկայացնելով իշխանությունները, ունի այս վիճակից ժողովրդի դուրսբերումը երաշխավորող ծրագիր, որը դիտի իրականացնի: Իսկ ընդդիմությունը լավ կլինի որ լրջորեն վերլուծի իր դարտությունը դատճառները, վեր կանգնի այսօր արդեն դրսեւորվող վիրավորվածի հոգեբանությունից: Ընտրի այնդիսի ճանապարհ, որ իրոք հակակշիռ դառնա իշխանություններին ժողովրդավարության սկզբունքների դահպանման եւ հասարակության առողջ զարգացման համար: Կարծում եմ, նա այդդիսին դառնալու համար եւ ուժեր, եւ հնարավորություններ ունի:

Գյումրիում իշխանությունների խնդիրները շատ են, ծրագրում գրվածը բավարար չէ: Քաղաքում դեռեւ է հասկանալս արդյունաբերությունը զարգացնել, հեռանկարային ճյուղերը, մրցունակությունն առահովել: Այստեղ կաղիտալ ներդրումներ են դեռեւ: Իմ կարծիքով, մեր քաղաքում գործող հասարակական-քաղաքական կազմակերպությունների նպատակները ընդհանուր են, եւ համագործակցելու շատ բան կա:

Գեւորգ Մկրտչյան, ՀՌԱԿ. -Թույլ տվեք չանդրադառնալ ընտրությունների եւ հանրաքվեի դատճառական «արդյունքների» բնաբանությանը: Հանգի այդ մասին շատ է գրվել ու խոսվել, այլ երկու խոսք ասել խնդրի բարոյական կողմի մասին: Իշխանությունները եկան դեռի քննությունները ունենալով «Նդյաական արդարացնում է միջոցները» կարգախոսը, որի ցավալի արդյունքը հայտնի է: Իսկ ՀՌԱԿ-ը, որպեսզի հասկանան, ընտրարշավի ի լավ նպատակին հասնելու մաքուր եւ արդար միջոցների կիրառումը քաղաքացիական ամենաարդական առաքինություն նկատելով, առանց որի դեռական ներին կյանքը կայլասերվի եւ կանբարոյանա: Այսօր մենք բաց ճակատով հայտարարում ենք մեր բարոյական հաղթանակը, կուսակցությունը մինչեւ վերջ հավատարիմ մնաց իր դավանած սկզբունքին եւ հանուն ոչ մի բանի չխոտորվեց դեռի իրական ժողովրդավարության տանող դժվարին, բայց արդար ճանապարհից: Պատահական չէ, որ ընտրությունների եւ հանրաքվեի «արդյունքները» հայտնի դառնալուց հետո կտրուկ ավելացել է ՀՌԱԿ-ին անդամագրվել ցանկացողների թիվը:

Հին Հռոմում հաղթահանդեսների ժամանակ տրիումֆատորի դեմը ներկում էին ալ կարմիր, որպեսզի չերեւա մեծարանքի, հրճվանքի շառագունումը հաղթողի դեմքին: Երկանքիվից կախում էին մի զանգ եւ մի խարազան, որոնք դեռեւ է հիշեցնեին, որ ճակատագիրը փոփոխական է եւ, չնայած այսօրվա մեծարանքին, առագայում նա կարող է ամենադաժան դատիժների ենթարկվել: Նրա հետում կանգնած դեռական ատուկը, որը բռնում էր ոսկեհուռ դասակը, ժամանակ առ ժամանակ գոռում էր. «Մի՛ գոռոզանա, հիշիր, որ դու լոկ մարդ ես»: Մեր այսօրվա նորաբուխ իշխանիկներին այդ «դեռական ատուկն» է դակասում:

Ինչ վերաբերում է ՀՌԱԿ-ին, ադան կուսակցությունն ունի իր ծրագիրը, որով այսուհետեւ էլ կառաջնորդվի շարունակելով իր օրինական գործունեությունը: Նրա Գյումրիի հաղթային կազմակերպությունը իր առջեւ խնդիր է դրել աջակցել հաղթի վերականգնման գործընթացին անկախ նրանից, թե ովքեր եւ ինչպես են իշխում: Մեր ձգտումն ու նպատակն է տեսնել գյումրեցուն արժանի Գյումրի:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ,
Սեփ. թղթակից
Գյումրի

ՍՓՅՈՒՌՔ-ՀԱՅՐԵՆԻՔ

Հովարդ Կարագյոզյան հասստությունը հայրենիքում ուզում է տեսնել ժդիս՝ առողջ ատամներով

Մեր թերթի շաբաթ օրվա համարում տեղեկացրել ենք Հովարդ Կարագյոզյան հասստության Հայաստանում ծավալած գործունեության մասին: Հուլիսի 28-ին Գյումրիում բացված մանկական ատամնաբուժարանը Երեւանի Հին Նորքում երկու տարի առաջ բացվածի շարունակությունն է: Հովարդ Կարագյոզյան հասստության կենտրոնական վարչությունը (Նյու Յորք) ուսումնասիրում է հնարավորությունը մոտ ապագայում Գորիսում, Վարաբաղում եւ մայրաքաղաքի մեկ այլ շրջանում էլ կառուցելու նմանատիպ դարմանատներ:

1921 ին տեր եւ տիկին Կարագյոզյանները իրենց դեռատի զավակի կորուստը Հովարդ Կարագյոզյան հիշատակի հիմնարկ ստեղծելով մեղմեցին: Բարեսիրական հիշյալ ձեռնարկը նպատակ ուներ հոգալ մանուկների առողջապահական խնդիրները, տեսադատում ուներ նաեւ նրանց դաստիարակության հարցերը: Կարագյոզյանն առաջինը հասստվում է Պոլսում, բայց քաղաքական սեղմումների դատճառով կենտրոնը փոխում է հասցեն՝ Փարիզ, հետագայում՝ Ա թենք, եւ ի վերջո, Լիբանան, միշտ տնօրենությամբ տեր եւ տիկին Նուբար Դավիթյանների (ներկայումս՝ փարիզաբնակ): Լիբանանի մայրաքաղաքից գործունեությունը ծավալվեց դեռի Սիրիա, միաժամանակ շարունակելով աշխատանքների հունասանում, վարչության կենտրոնատեղին միշտ դահելով Նյու Յորքում, Միհրան Կարագյոզյանի եւ 1934 թ. ից սկսյալ՝ օրիորդ Լիլա Կարագյոզյանի ղեկավարությամբ: Այսօր Հովարդ Կարագյոզյան հիշատակի տուն կոչվող հասստության նախագահությունը վարում է օրիորդ Լիլա Կարագյոզյանը: 1963 ից փոխնախագահն է հոգեբան, մանկավարժ դոկտոր դրոֆեսոր Բերկրուհի Սվաճյանը, ընդհանուր տնօրենը՝ դոկտոր Վարդան Բանդազյանը: Տիկին Սվաճյանը հասստության բազմամյա աշխատանքը ներկայացնելով ասաց, որ փոքրահասակների հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների առահովումը ասիճանաբար ներառեց նաեւ մայրերի դաստիարակությունը, զանազան դասախոսություններ ու տներում կատարվող ընկերային այլ ծառայություններն ընդլայնեցին Կարագյոզյան ընկերության դերը եւ նպաստեցին իրենց աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Սիրիայում եւ Լիբանանում Կարագյոզյան հասստությունը մեկ ուրիշ կարեւոր ձեռնարկ էլ հեղինակեց. նյութական դժվարությունների դատճառով դդրոց չհաճախողների համար արհեստագիտական դասընթացներ կազմակերդվեցին. աղջիկները սովորում էին կար ու ձեւ, կերակուր եփել, տղաները՝ զանազան արհեստների տեր դառնում, առահովում հետագա առուստը: Միջին Արեւելքի արդյունավետ փորձը հասստությունը եվրոդայում օրեցօր մեծացող հայ գաղութներում էլ տարածեց սահմանափակ ձեւով, հատկապես Գերմանիայում եւ Հոլանդիայում: Ի տարբերություն նախորդների, այստեղ հոգաց նաեւ Թուրքիայից արտագաղթած իր հայրենակիցների հայամսած, հայախոս, հայագիր լինելը: Այսօր Հովարդ Կարագյոզյան հասստությունը շահագրգիռ է Հայաստանում սկիզբ դրած բարեսիրական գործունեության՝ շառավիղը լայնացնել՝ մասամբ ի հաշիվ առանձին գաղթօջախներում հասստության հաստիքների կրճատման: Կարագյոզյանն այսօր շուրջ մեկ հարյուրյակ աշխատակից ունի, որից 22 ն աշխատում են Հին Նորքի եւ Գյումրիի դարմանատուն մասնաճյուղերում: Կարագյոզյանը անկախ, ինքնաֆինանսավորվող հասստություն է եւ իրավական նորեն գործում է առանց արտաքին ներդրումների կամ եկամուտների: Սորոս Յավրու Շագուկը, որ Հայաստանի երկու՝ Երեւանի եւ Գյումրիի նորաբաց ատամնաբուժարաններում ամերիկյան առաջնակարգ փորձն է փոխանցում: Դոկտ. Յավրու Շագուկի լսարանը այդ օրերին մեծանում է՝ տեղի սոմատոլոգիական հասստությունների աշխատակիցներով: Հովարդ Կարագյոզյանը կրթական ծրագիր էլ ունի. Երեւանի բժշկական համալսարանի լավագույն ատամնաբույժ ուսանողները հետագայում կարող են այստեղ վերադատրաստվել: «Նորքի ատամնաբուժարանում, ի տարբերություն Գյումրիի, մասնաճյուղ բացված են նաեւ օրթոդոնտիկս (բերանում ատամների ծռվածություն) կոչվող հիվանդությունը բուժելու մեջ», ասում է Հովարդ Կարագյոզյան հասստության հայաստանյան մասնաճյուղի տնօրեն դոկտոր Կամո Տեր Պետրոսյանը: Գնահատելով Կարագյոզյան հասստության հիմնադիրների գործունեությունը եւ ներկայիս ղեկավարության հայրենիքի հանդեղ ուշադրությունը (անցյալ տարի հոկտեմբերին որոշվեց բացել երկրորդ՝ Գյումրիի մասնաճյուղը, մարից սկսվեցին շինարարական աշխատանքները), դարոն Տեր Պետրոսյանը տեղեկացրեց, որ իրենք էլ աշխատում են Հովարդ Կարագյոզյան բարեսիրական ծառայությունների դաշտը միայն առողջապահությամբ չշրջանակել. Նորքում գործում են երեխաների տարբեր խմբակներ, նրանց փողոցից կտրելու նպատակով:

«Օրական քանի երեխա է գալիս ու հարցնում՝ ե՞րբ եք բացելու», ուրախ դատմում էր Գյումրիի դարմանատան բժիշկներից մեկը: Կառուցվող Գյումրիի դեռեւս տխուր համայնատակերում Հովարդ Կարագյոզյան մանկական ատամնաբուժարանը երկուշաբթի օրվանից օրական 60 հիվանդի կարող է սդասարկել: Հումորի հայրենիքում ամեն օր 60 ժդիս՝ առողջ ատամներով:

ԱՆԱՏՈՏ ՀՈՒԼԻՖՅԱՆ.

Կարագյոզյան հասստության Երեւանի կենտրոնի բեմը

digitised by A.R.A.R.@

Խաղարամտություն, թէ՞ գաղառամտություն

ԵՐՈՒՆԴ ԱՂԱՏԵՆՆ

Սկիզբը էջ 1

Ցաւալի է, որ բշնամիներու ձեռքով հայ ժողովուրդի երկու տարեցքաս մասերու բաժնուած ըլլալու իրողութիւնը այսօր կ'ենթարկուի քաղաքական շահարկման եւ շահատակումի՝ անհատներու կողմէ, որոնք Հայաստանի մէջ կ'իշխեն ունին եւ այսօրուան իշխանութեան գաղափարախօսական դարիններու կարգին կը դասուին: Խօսքը Էդուարդ Շմաւոնի Եզորեանի մասին է, որ առաջին անգամ չէ, որ կը դրսեւորէ իր խորունկ ատելութիւնը սփիւռքի հայրենադարձ հատուածին նկատմամբ: Կարծէք բաւարար չըլլային արեւմտահայութեան վիճակուած ահաւոր ողբերգութիւնը եւ հայրենի հողը կորսնցնելու ճակատագրային հարուածը, այսօր նոյն հատուածը նշանակ կը դառնայ նաեւ խորհրդներու կողմէ, նոր անկախացած Հայաստանի դեկավար շարքերէն:

Պրն. Եզորեան Ազգային ժողովի երեսփոխան ընտրուած է թիւ 28 ընտրատարածքէն: Եթէ չընտրէր զարմանալի ոչինչ ըլլար: Արդարեւ, այնտեղ ամէն հակաօրինական միջոցի դիմուած էր իր ընտրութիւնը յաջողացնելու համար: Կ'ըսուի, թէ նոյնիսկ բանակային զօրամասերու մասնաճիւղեր մասնակցեցան փորձերուն եւ զինուորներուն սխիզած էին քուէարկել ի նպաստ իրեն: Երբ այս է իրողութիւնը արժանադատութիւն ունեցող ոեւէ անձ ոչինչ մոսացութեան տալ դատահածներ կարենայ մտածել տալու համար իր շաս թէական «ընտրութիւնը»:

Կ'ըսեն, թէ կախաղան հանուած մարդուն տան մէջ դարանի մասին չեն խօսիր: Իսկ յաղթողը արժանի չէ իր յաղթանակին, եթէ չի կրնար վերհանձնութեամբ տանիլ այդ յաղթանակը:

Պրն. Եզորեան, փոխանակ ինչ մը ամօթխածութիւն ցուցաբերելու իրեն բնծայուած այդ կեղծ յաղթանակին առիթով եկած եւ հարցազրոյց մը հրատարակած է «Հայաստանի Հանրապետութիւն» դաշնակցութեան թերթին մէջ, որուն մէջ կը հարցնէ, թէ կախաղան հանուած մարդուն տան մէջ դարանի մասին չեն խօսիր: Իսկ յաղթողը արժանի չէ իր յաղթանակին, եթէ չի կրնար վերհանձնութեամբ տանիլ այդ յաղթանակը:

Պրն. Եզորեան, փոխանակ ինչ մը ամօթխածութիւն ցուցաբերելու իրեն բնծայուած այդ կեղծ յաղթանակին առիթով եկած եւ հարցազրոյց մը հրատարակած է «Հայաստանի Հանրապետութիւն» դաշնակցութեան թերթին մէջ, որուն մէջ կը հարցնէ, թէ «ընտրութիւնը»:

Կ'ըսեն

ԱԶԳ

Միջազգային

ՍԱՏԻՆՅԱՆ ՊԱՇԱՏ

Խուզարկություն Ֆրանսիայի վարչապետի նստավայրում

Հայտնաբերվել են հատուկ ծառայությունների եւ բերեւս կուսակցությունների ֆինանսավորման գաղտնի ֆոնդեր

Օրերս Ֆրանսիայի վարչապետի նստավայր Մատիոն դպրաս մուտք գործեց դատաքննիչ Էրիկ Ալֆենը Կրեսեյ խոպանի գլխավոր դատախազի տեղակալ Մարկ Բրիսե Յոկոյի ուղեկցությամբ: Սկզբում քննիչին ներս չթողեցին, բայց մի քանի ժամ անց վերեւից տրված հրահանգով դուռդպրաս բացվեց: Քննիչը մտադրվել էր վարչապետի նստավայրում խուզարկություն կատարել, որպեսզի ստանար բանկային վճարային ծանուցագրերի պատճեններ: Դրանք վերաբերում են կառավարող կոալիցիայի մեջ մտնող Հանրապետական կուսակցության «հատուկ ֆոնդից» կատարված դրամական փոխանցմանը: Ըստ երեւույթին, քննիչը ստացել է իրեն հետաքրքրող փաստաթղթեր:

Բանն այն է, որ երկու շաբաթ առաջ լուսաբաց եւ արտաքուստ երկչոտ քննիչ Էրիկ Ալֆենը հերթական խուզարկության ժամանակ հանրապետականների գանձապետ Ժան Պիեռ Տոմայի չիրկիզվող պահարանում հայտնաբերել էր 2.4 մլն ֆրանկ գումար եւ 500 թղթակցություններ: Գանձապետի քննիչին բացատրել էր, որ այդ փողերը կուսակցությունն ստացել է կառավարության «հատուկ ֆոնդից», եւ որ դրանք չեն օգտագործվել նախագահական արշավի ժամանակ:



Էրիկ Ալֆենը

Կառավարական դատաստանները Էրիկ Ալֆենին դարձաբանեցին, թե գործում է հատուկ ծառայությունների եւ առաջին հերթին արտաքին անվտանգության գլխավոր վարչության (ԱԱԴՎ) գաղտնի գործողությունների լրացուցիչ ֆինանսավորման համար: Ժամանակին հենց ԱԱԴՎ-ն էր խորտակել Ֆրանսիայի միջուկային փորձարկումների դեմ բողոք հայտնած կանաչների «Ռենբոու ուորիոր» նավը:

Մենք այլ մոլորություններ բաշխում չենք, բայց մի քանի ժամ անց վերեւից տրված հրահանգով դուռդպրաս բացվեց: Քննիչը մտադրվել էր վարչապետի նստավայրում խուզարկություն կատարել, որպեսզի ստանար բանկային վճարային ծանուցագրերի պատճեններ: Դրանք վերաբերում են կառավարող կոալիցիայի մեջ մտնող Հանրապետական կուսակցության «հատուկ ֆոնդից» կատարված դրամական փոխանցմանը: Ըստ երեւույթին, քննիչը ստացել է իրեն հետաքրքրող փաստաթղթեր:

Բանն այն է, որ երկու շաբաթ առաջ լուսաբաց եւ արտաքուստ երկչոտ քննիչ Էրիկ Ալֆենը հերթական խուզարկության ժամանակ հանրապետականների գանձապետ Ժան Պիեռ Տոմայի չիրկիզվող պահարանում հայտնաբերել էր 2.4 մլն ֆրանկ գումար եւ 500 թղթակցություններ: Գանձապետի քննիչին բացատրել էր, որ այդ փողերը կուսակցությունն ստացել է կառավարության «հատուկ ֆոնդից», եւ որ դրանք չեն օգտագործվել նախագահական արշավի ժամանակ:

Կառավարական դատաստանները Էրիկ Ալֆենին դարձաբանեցին, թե գործում է հատուկ ծառայությունների եւ առաջին հերթին արտաքին անվտանգության գլխավոր վարչության (ԱԱԴՎ) գաղտնի գործողությունների լրացուցիչ ֆինանսավորման համար: Ժամանակին հենց ԱԱԴՎ-ն էր խորտակել Ֆրանսիայի միջուկային փորձարկումների դեմ բողոք հայտնած կանաչների «Ռենբոու ուորիոր» նավը:

Մենք այլ մոլորություններ բաշխում չենք, բայց մի քանի ժամ անց վերեւից տրված հրահանգով դուռդպրաս բացվեց: Քննիչը մտադրվել էր վարչապետի նստավայրում խուզարկություն կատարել, որպեսզի ստանար բանկային վճարային ծանուցագրերի պատճեններ: Դրանք վերաբերում են կառավարող կոալիցիայի մեջ մտնող Հանրապետական կուսակցության «հատուկ ֆոնդից» կատարված դրամական փոխանցմանը: Ըստ երեւույթին, քննիչը ստացել է իրեն հետաքրքրող փաստաթղթեր:

Բանն այն է, որ երկու շաբաթ առաջ լուսաբաց եւ արտաքուստ երկչոտ քննիչ Էրիկ Ալֆենը հերթական խուզարկության ժամանակ հանրապետականների գանձապետ Ժան Պիեռ Տոմայի չիրկիզվող պահարանում հայտնաբերել էր 2.4 մլն ֆրանկ գումար եւ 500 թղթակցություններ: Գանձապետի քննիչին բացատրել էր, որ այդ փողերը կուսակցությունն ստացել է կառավարության «հատուկ ֆոնդից», եւ որ դրանք չեն օգտագործվել նախագահական արշավի ժամանակ:

Կառավարական դատաստանները Էրիկ Ալֆենին դարձաբանեցին, թե

ՇՐՋԱՆ

Անկարան նախապատրաստում է նոր հարձակում PKK-ի դեմ

ԱՄՆ-ի միջնորդական ջանքերը Հյուսիսային Իրաքում

Հյուսիսային Իրաքում PKK-ի դեմ իրար հաջորդող երկու հաջող գործողություններից հետո Անկարան սահմանի անվտանգությունն ապահովելու նպատակով պատրաստվում է նոր հարձակման անցնել: Հյուսիսային Իրաքում PKK-ի գործունեությունը չեզոքացնելու եւ սահմանից նրանց մուտքը կանխելու նպատակով Անկարան Ռուդ առաջնորդներին ներկայացրեց առաջարկների մի նոր փաթեթ: Պարզվում է, որ մինչ այդ խնդրո առարկայի վերաբերյալ Մեսուտ Բարզանիի եւ Ջելալ Թալաբանիի կողմից Անկարային ներկայացված առաջարկները ուռճացված են եղել, որի պատճառով էլ մերժվել են: Բարզանին, սահմանի վրա հսկողություն իրականացնելու վերաբերյալ Անկարայի կողմից ներկայացված առաջարկին ի պատասխան, պահանջել էր Սադդամի ուժերի գործողությունների հետեւանքով ազատված տարբ 350 սահմանամերձ գյուղերի վերականգնումը: Իսկ Թալաբանին էլ իր հերթին պահանջել էր, որ Հաբուրի սահմանային դարպասից ստացված շահույթների մի մասը ստանալու համար Թուրքիան իր եւ Բարզանիի միջեւ միջնորդի դեր ստանձնի: Անկարայի պատրաստած փաթեթը նեղառում է հետեւյալ կետերը. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տրված զենքը հակամարտող կողմերը կօգտագործեն միմյանց դեմ եւ նույնիսկ կրենկին PKK-ի ձեռքը, ապա երկու կողմերին էլ զենք չի տրվի: Հիմնականում կցուցաբերվի տեխնիկական օգնություն: Կվերակառուցվեն սահմանամերձ բոլոր ճանապարհները: Կընդլայնվի պարենային օգնությունը: եւ վերջապես, Բարզանիի ու Թալաբանիի միջեւ բախումների պատճառը հանդիսացող հակասությունների լուծումը Թուրքիայի հետ համագործակցության նախապայման օգտագործելը Անկարան երբեք չի ընդունի»:

Վաշինգտոնում «Հյուրիյեթի» սեփական թղթակից Էսեն Ունուրը տեղեկացնում է, որ ԱՄՆ-ը Հյուսիսային Իրաքում հակամարտող իրական խմբավորումների միջեւ պատրաստվում է հանդես գալ որպես միջնորդ: ԱՄՆ-ի արտգործնախարարությունից նշում են, որ Հյուսիսային Իրաքում ուրդ առաջնորդներ Բարզանիի եւ Թալաբանիի կողմնակիցների միջեւ շարունակվող պատերազմի պատճառով երջանում PKK-ն ձեռք է բերել ազատ գործելու հնարավորություններ, մի հանգամանք, որը Թուրքիային ստիպում է Հյուսիսային Իրաքում հաճախակի գործողություններ ձեռնարկել:

ԱՄՆ-ի իշխանությունները, որ Բարզանիին եւ Թալաբանիին ասում էին, թե այլեւս նրանցով չեն զբաղվելու, հանկարծ փոխելով իրենց մոտեցումը, որոշեցին կազմակերպել նրանց հանդիպումն ու մտադրությունը դադարեցնելու ուղղությամբ սկսեցին քայլեր ձեռնարկել: Ինչպես հայտնի է, Արեւմուտքի, Թուրքիայի եւ Իրանի կողմից ձեռնարկված բազմաթիվ միջնորդական ջանքերի շնորհիվ շաբ կարճ ժամանակով խաղաղություն էր հաստատվել, բայց հետագայում մարտերը վերսկսվել էին: Արտգործնախարարության նույն աղբյուրը տեղեկացնում է, որ հուլիս ամսվա սկզբներին սկսված ծանր մարտերի հետեւանքով Հյուսիսային Իրաքում Սադդամի դեմ պաշտպանվող իրաքցի Բազմազգ ուժերի կողմից ցուցաբերվող մարդասիրական օգնության ծանաղարհը գրեթե փակվել է, որի պատճառով ԱՄՆ-ը սկսեց իր միջնորդական քայլերը: ԱՄՆ-ի աղբյուրները ուշադրություն են դարձնում նաեւ այն հանգամանքին, որ Բաղդադի հսկողությունից դուրս մնացած Հյուսիսային Իրաքում հանուն իշխանության Բարզանիի եւ Թալաբանիի ուժերի միջեւ տեղի ունեցող բախումների հետեւանքով մեկ տարվա ընթացքում սպանվել է ամենաքիչը 4 հազար մարդ: Հատկանշական է, որ վարչապետ Թ. Չիլլերի, նախկին արտգործնախարար Մուրատ Բարայալչրնի, արտգործնախարար Էրդալ Ինոնյուի եւ նախարարների կաբինետի գլխավոր խորհրդական Էմրե Գյոնենսայի վաշինգտոնյան այցելությունների ընթացքում շոշափվել էր այն միտքը, որ Հյուսիսային Իրաքում Թուրքիայի կողմից գործողություններ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա: Այս հանդիպումների արդյունքները չնայած պաշտոնապես չհրապարակվեցին, բայց ԱՄՆ-ի եւ Թուրքիայի ղեկավարների կողմից տրված պարզաբանումներից հասկացվում էր, որ այս հանդիպումների ընթացքում Թուրքիայի եւ Հյուսիսային Իրաքի սահմանում անվտանգությունը իրաքցի քրդերի կողմից ապահովելու եւ քրդերին տեխնիկական օգնություն ցուցաբերելու հարցում համաձայնություն էր ձեռք բերվել:

ԳԵՐՄԱՆ ՅԱՐԵՑՅԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գնդապետ Քադաֆին չի հիասթափվել ռուսական զենքից

Ռուսաստանի խոշորագույն պատրաստներից մեկը՝ Լիբիան, մոտ ժամանակներս բերեւս սկսի վճարել իր պարտքերը: Նման հույս են ներշնչում անցյալ շաբաթ Մոսկվայում Լիբիայի եւ Ռուսաստանի պատվիրակությունների վարած բանակցությունների արդյունքները:

Դա բանակցությունների երրորդ փուլն էր 1993 թ. ի վեր, երբ Լիբիայի դեմ ՄԱԿ-ի տնտեսական պատժամիջոցների հաստատումից հետո ռուս լիբիական առեւտրա տնտեսական համագործակցությունը սասեցվեց:

Երկամյա ջանքերի արդյունքը դարձավ մի շարք փաստաթղթերի ստորագրումը: Դրանց թվում են առեւտրա տնտեսական համագործակցությունը, այդ համագործակցության ռուս լիբիական հանձնաժողովի ստեղծումը վերաբերող համաձայնագրերը եւ ռուս լիբիական ֆինանսական բնկերության կազմակերպման նախագիծը:

Համագործակցության համաձայնագիրը նախատեսում է ռուս կապալառուների կողմից Լիբիայի վառելիքաէներգետիկ համալիրի մի շարք խոշոր օբյեկտների կառուցում եւ արդիականացում: Խոսքը էլեկտրակայանների, էլեկտրահաղորդման բարձրավոլտ գծերի, ջերմաէլեկտրակայանների, նավթամաղների ու գազամաղների, ինչպես նաեւ նավթի հետախուզման ու արդյունահանման մասին է:

Այդ պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմում է 1.5-2 մլրդ դոլար: Ճիշտ է, Ռուսաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների մասնագետները նշում են, որ Լիբիայի հետ ուրիշ երկրների առեւտրական համագործակցությունը:

Լիբիայի հետ ավանդական կապերի վերականգնումը համարում են Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեծ հաջողություն: Դեսպանությունում վստահ են, որ միայն ԽՍՀՄ-ի նախկին ավանդական գործընկերների շուկաներում, տեսնելով ֆիրմաների հետ մրցակցության բացակայության պայմաններում ռուսական սարքավորումներն ու տեխնոլոգիաները կկարողանան իրենց համար ճանապարհ հարթել:

Լիբիան ընդունել է, որ Ռուսաստանը ժառանգել է նախկին ԽՍՀՄ-ի բոլոր ակտիվներն ու պարտքերը: Դա ճանապարհ է հարթում, որ լիբիացիները վճարեն ներկայումս գոյություն չունեցող ԽՍՀՄ-ի մասնակարարումների գծով իրենց պարտքը, որ կազմում է 2.4 մլրդ դոլար:

Լիբիայի պատվիրակությունը Մոսկվա կատարած այցի ընթացքում բանակցություններ վարեց «Ռոսվորուժենիի» կոնցեռնի ներկայացուցիչների հետ: Լիբիայի ռազմական ներգաղթյալները զգալի չափով հիմնված է խորհրդային տեխնիկայի վրա, եւ լիբիացիներն ազատ են այդ բնագավառում վերսկսել համագործակցությունը:

«Իզվեստիա»
29 հուլիս

ՀԱՅԱՍՏԱՆ

Ադրբեջան. Գաբալիի կայանի վարձակալումը դեռեւս անորոշ է

«Գաբալիի ռադիոլոկացիոն կայանը Ռուսաստանին վարձակալության տալու մասին հարցը կողմերը ներկայումս չեն քննարկում», հայտարարել է Ադրբեջանի վարչապետ Ֆուադ Ղուլիեւը: Այս մասին հաղորդում է Բաքվի ռադիոն: Նա նշել է, որ զանգվածային լրատվության միջոցներում ժամանակ առ ժամանակ հայտնվող վերոհիշյալ հարցի շուրջ արդյունավետ բանակցությունների անցկացման վերաբերյալ տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը: Ըստ Ղուլիեւի, «կան միայն համաձայնության ակնարկներ»: Գաբալիի ռադիոլոկացիոն կայանի ճակատագիրը պետք է որոշեն երկու երկրների նախագահները, որից հետո մասնագետները կմշակեն պետությունների ղեկավարների կողմից քննարկված տեքստը:

Նոյյան տարան

Հնդկաստանը ռուսական մի շարք զինատեսակներ է արտադրելու

Հնդկաստանը մտադիր է Ռուսաստանի հետ համատեղ սկսել ռուսական մի շարք արդիական զինատեսակների, այդ թվում ՍՈՒ-30ԲԿ բազմաֆունկցիոնալ կործանիչ-ռմբակոծչի համատեղ արտադրությունը: Կքննարկվի ոչ միայն Հնդկաստանին այդ կարգի 20 ռազմաօդանավ վաճառելու հարցը, այլեւ դրանք արտոնագրով հնդկական ձեռնարկություններում արտադրելու հեռանկարը: Հնդկաստանը, բերեւս Ռուսաստանից ձեռք կբերի նաեւ ԻԼ-76 փոխադրական ինքնաթիռի հիման վրա կառուցված օդային հեղուկանավ: Հնդկաստանն արդեն պատրաստ է ՍՈՒ-30 ռազմաօդանավերի 2 էսկադրիլիա գնել՝ ավելի վաղ Ռուսաստանին իր հատկացրած 800 մլն դոլլարանոց տեխնիկական վարկի հաշվին:

ԷԿՈ ՏԱՍՍ

Չադիր. Էբոլա հարուցիչի դեմ դեղամիջոց է ստեղծվել

ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ զադիրցի մանրաբան գիտնականների մի խումբ՝ պրոֆեսոր Ժան Մայեմբեի գլխավորությամբ ավարտել է այն նոր պատրաստուկի հաջող փորձարկումները, որն ստեղծվել է Կինշասայի լաբորատորիաներում եւ այսօր կարող է դառնալ արյունազեղումամբ ուղեկցվող էբոլայի տենդի դեմ մղվող պայքարի միակ միջոցը: Ինչպես հայտնի է, էբոլայի համաճարակի բռնկման հետեւանքով այս տարի Չադիրում զոհ է դարձել 233 մարդ, եւս 296-ը ախտահարվել են այդ հիվանդությամբ: 1976 թվականին Չադիրում էբոլայից զոհվել է 300 մարդ: Ինչպես Կինշասայում լրագրողներին հայտնել է զադիրցի գիտնականը, նոր պատրաստուկը ստացվել է այն հիվանդների արյան բաղադրիչներից, որոնց հաջողվել է փրկել ինտենսիվ բուժընթացից հետո:

Արմենպրես

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Հայ երգի թատրոնը փայփայում է աստղերին, որ Հայաստանից չգնան

– Երգի ժեսական թատրոնը նոր է վերադարձել Հայաստանի երջանիներում հյուրախաղերից, որտեղ հարմերգներ էր տալիս Արամ Ասատրյանի հետ: «Ուրբաթ այս ժամին» ծրագրով Վայքի երջխորհրդի մշակույթի բաժնի դասասխանատուն, չնայած մասնակցել էր դրանց, բայց ասաց, թե ձեր երկուսի համատեղ համերգը չի դատկերացնում:

– Սկսենք խնդրից ինչու էր այդպես կազմակերդված: Այսօր Հայ երգի ժեսական թատրոնը չի կարողանում շարունակել իր դասիլիճի զումնալից դահեր չի արթնացնում, ո՞րն է դատճառը:

– Գուցե ասթիս երաժշտության մատչելիությամբ. այն շատ շուտ մտնում է ժողովրդի մեջ եւ զարգանում: Մեր երաժշտությունն ավելի շատ հոգու եւ արվեստի համար է: Ես չեմ զարմանում, որ մեր ներկայացրած հայ ժողովրդական երգը այդդիսի «ֆուրոր» չի անում դասիլիճում:

– Միգուցե այդ մատչելիությունը վտանգավոր է:

– Շատ վտանգավոր է: Արամ Ասատրյանը լավ երգեր ունի. կարող եմ նշել «Օվսաննա» երգը: «Բոլվարային» կոչված ասթիս լավ երգ է: Բայց երբ բարձ մի մենակատարի երգ վերցնում ու հայերեն է ներկայացնում, եւ ազգը դա հայ երգ է ընդունում, որտում դրա տակ, ուրախանում, ինձ համար դա զարմանալի է: Երբ «Բաղմային» կատարելի է կոչել այդ երգը, համաձայն եմ, որ Ասատրյանը մեկ բայլ առաջ է տարել այն: Ես 99 տոկոսով չեմ ընդունում այդ երգը, իսկ համերգից հետո առավել ես չեմ հասկանում:

– Ի՞նչ է հասցրել անել ձեր թատրոնը: Մի անգամ ասացիք հասցրել եք 3 Ասուլ անել:

– Երբ սկզբից սկսենք, ապա ավելի շատ «Այո»-ից է սկսել եւ դասիարակել արվեստագետների, երաժիշտների, կատարողների մի նոր սերունդ: Մի կողմ թողնենք լավն են, թե վատը, բայց այսօր ունենք Շուշան Պետրոսյան, Անահիտ Մանուկյան, Արամ, մեր բոլոր մենակատարներին: Ի զարմանս ինձ, շատ են սիրում ռադիոյով, հեռուստատեսությամբ, բերդերում համեմատել Մոսկվայի որեւէ ծրագրի հետ եւ մեր մասին միայն վատը գրել մենք անգլերեն ենք երգում: Իսկ ո՞ւր են այն հայ կոմպոզիտորները, որոնք այսօրվա երաժշտություն են գրում: Սփոփված անգլերեն ենք երգում: Բայց ով է ասել, թե անգլերեն երգելն ազգված է:

– Ձեր թատրոնի անունը հայ երգի թատրոն:

– Երբ հայ ենք, ոիտի կոչվի հայ թատրոն: Լավ կյանքից չէ, որ անգլերեն ենք երգում: Բայց այսօր ունենք «XX դարի երգանի», որը հայ երգի դատմությունն է: Անգլերեն երգելը սփոփված բայլ է: Մի բան լավ հիշենք. ինչդիսին մեր կյանքն է, այնդիսին էլ արվեստն է, հեռուստատեսությունը: Պետք չէ համեմատել: Այնուամենայնիվ, ինչքան մի տոմի վրա զումնալից դահեր չի արթնացնում, ո՞րն է դատճառը:

– Գուցե ասթիս երաժշտության մատչելիությամբ. այն շատ շուտ մտնում է ժողովրդի մեջ եւ զարգանում: Մեր երաժշտությունն ավելի շատ հոգու եւ արվեստի համար է: Ես չեմ զարմանում, որ մեր ներկայացրած հայ ժողովրդական երգը այդդիսի «ֆուրոր» չի անում դասիլիճում:

– Միգուցե այդ մատչելիությունը վտանգավոր է:

– Շատ վտանգավոր է: Արամ Ասատրյանը լավ երգեր ունի. կարող եմ նշել «Օվսաննա» երգը: «Բոլվարային» կոչված ասթիս լավ երգ է: Բայց երբ բարձ մի մենակատարի երգ վերցնում ու հայերեն է ներկայացնում, եւ ազգը դա հայ երգ է ընդունում, որտում դրա տակ, ուրախանում, ինձ համար դա զարմանալի է: Երբ «Բաղմային» կատարելի է կոչել այդ երգը, համաձայն եմ, որ Ասատրյանը մեկ բայլ առաջ է տարել այն: Ես 99 տոկոսով չեմ ընդունում այդ երգը, իսկ համերգից հետո առավել ես չեմ հասկանում:

– Ի՞նչ է հասցրել անել ձեր թատրոնը: Մի անգամ ասացիք հասցրել եք 3 Ասուլ անել:

– Երբ սկզբից սկսենք, ապա ավելի շատ «Այո»-ից է սկսել եւ դասիարակել արվեստագետների, երաժիշտների, կատարողների մի նոր սերունդ: Մի կողմ թողնենք լավն են, թե վատը, բայց այսօր ունենք Շուշան Պետրոսյան, Անահիտ Մանուկյան, Արամ, մեր բոլոր մենակատարներին: Ի զարմանս ինձ, շատ են սիրում ռադիոյով, հեռուստատեսությամբ, բերդերում համեմատել Մոսկվայի որեւէ ծրագրի հետ եւ մեր մասին միայն վատը գրել մենք անգլերեն ենք երգում: Իսկ ո՞ւր են այն հայ կոմպոզիտորները, որոնք այսօրվա երաժշտություն են գրում: Սփոփված անգլերեն ենք երգում: Բայց ով է ասել, թե անգլերեն երգելն ազգված է:

– Ձեր թատրոնի անունը հայ երգի թատրոն:

– Երբ հայ ենք, ոիտի կոչվի հայ թատրոն: Լավ կյանքից չէ, որ անգլերեն ենք երգում: Բայց այսօր ունենք «XX դարի երգանի», որը հայ երգի դատմությունն է: Անգլերեն երգելը սփոփված բայլ է: Մի բան լավ հիշենք. ինչդիսին մեր կյանքն է, այնդիսին էլ արվեստն է, հեռուստատեսությունը: Պետք չէ համեմատել: Այնուամենայնիվ, ինչքան մի տոմի վրա չինարարությունը: Արդեն մոտ մեկ տարի է, որ յորս հարկաբաժին մեզ տրամադրած Հենի երկրորդ հարկում 180 տեղանոց դահլիճ եւ 60 տեղանոց բաստերական արճարան ենք ուզում կառուցել: Հայաստանում դեռ չեն հասկացել, թե ինչ է հովանավորությունը: Ինձ հանդիպածներ միանգամից ակնկալիքներ են ուզում, որն արվեստում այդքան առատ չի լինում: Կա՞ն մեկենասներ Հայաստանում, ուրախ կլինեմ ծանոթանալ: Իսկ Արամ Ասատրյանի հետ համատեղ համերգը նոյտակ ուներ ինչքան հանդիսատես կգար Արամ Ասատրյանի համար, նույնքան էլ մեզ համար: 10 համերգներից գոյացած զումարից այդքան էլ գոհ չեմ: Հյուրանոցի վարձը կամ ասենք դասիլիճի ծախսերը մոտել ենք ամբողջապես, առանց զեղչերի, բայց ուրախ եմ, որ այդ զումարով գոնե մի երկու ամսվա չինարարություն կարող ենք շարունակել: Արամ Ասատրյանի հետ համատեղ համերգային ծրագիրը կառուցված էր այնպես, որ առաջին բաժնում նրան

ԱԶԳ

Մարզական

ԸՍԲԱՍՍԱՐՏ

Ձահել են, բայց խակ չեն

Մարայիկում ավարտվեց հունա-հռոմեական ըմբշամարտի Հայաստանի առաջնությունը: Հեսարիր գոտեմարտերից հետո, բոլոր քաշային կարգերի, հանրապետության չեմպիոնի կոչումը նվաճեցին զինծառայող Ա. Թեւոսյանը (Էջմիածին), Արաբես Մինասյանը (Գյումրի), Արմեն Նազարյանը (Երեւան), Իշխան Պողոսյանը («Հայաստան», Էջմիածին), Կարեն Բաղդասարյանը (զինծառայող, Երեւան), Սամվել Թորոսյանը («Աշխատանքային ռեզերվներ», Գյումրի), Լեւոն Գեղամյանը («Դինամո», Գյումրի), Հայկազ Գաղասյանը («Հայաստան», Էջմիածին), Խորեն Պատրոյանը («Դինամո», Գյումրի), Ա.Սոս Զոհրաբյանը («Հայաստան», Էջմիածին): «Եզրափակիչ հանդիպումները շատ հետաքրքիր էին, Սնարի բրբակցի հետ զրույցի ժամանակ ասաց Հայաստանի ազգ մարզիչ, հանրապետության վաստակավոր մարզիչ Էդուարդ Հարությունյանը, փորձառու մարզիկները, որոնց հետ մեծ հույսեր էիք կապում, երիտասարդ ըմբիշների կողմից ուժեղ դիմադրության հանդիպեցին եւ մի քանի քաշային կարգերում, համառությունից հետո, զիջեցին դիրքերը: Այսպես, մինչեւ 62 կգ քաշային կարգում Իշխան Պողոսյանը եզրափակիչ գոտեմարտում վստահ հաղթանակ տարավ Հայաստանի բազմակի չեմպիոն, աշխարհի դասակարգի չեմպիոն, ալմուրյանցի Տիգրան Մկրտչյանի նկատմամբ: Ինչպես միշտ, իր հանդիպումները գեղեցիկ անցկացրեց Եվրոպայի կրկնակի չեմպիոն 21-ամյա Արմեն Նազարյանը, որն այս անգամ էլ ոչ մի հույս չթողեց իր մրցակիցներին: Մրցումները կազմակերպված էին բարձր մակարդակով եւ մեծ հետաքրքրություն առաջացրին ըմբշամարտի սիրահարների շրջանում:

Սնարի

ԱՍՏՂԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Փառատո Կոպին եւ Օռնելա Մուտին

ԳԵՎՈՐԳ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
Վալանս, Ֆրանսիա

Իտալացի անվանի հեծանվորդ Ֆաուստո Կոպիին նվիրված կինոֆիլմի նկարահանումներն ավարտվեցին: 4 ժամ տեւողությամբ «Մեծն Ֆաուստո» անունը կրող կինոֆիլմը նկարահանողների RAI եւ SFP հեռուստալուսանկարչությունների վրա նստեց 12 մլրդ լիրա: Ֆիլմը նվիրված է campionissimo-ի Ֆաուստո Կոպիի (campionissimo-ի տարերին նշանակում է չեմպիոնների չեմպիոն) եւ Ջուլիա Օկինիի սիրային ողբերգությանը, որը 20-դ դարի Իտալիայի սիրային ամենամեծ ողբերգություններից մեկն էր: Ֆաուստո Կոպին, որը ամուսնացած էր եւ ուներ մեկ աղջիկ, 1952 թ. սիրային կապի մեջ մտավ Ջուլիա Օկինիի հետ, որը մի բժշկի կին էր եւ իր հերթին երկու երեխա ուներ: 1954-ին Լուգանոյում երբ Ֆաուստո Կոպին դարձավ աշխարհի չեմպիոն, բոլորը տեսան «Սոլիտակ կնոջը», ինչպես անվանում էին գեղեցկուհի Ջուլիա Օկինիին փոքրիկ Ֆաուստինոյի հետ, մի երեխա, որը նրանց «անօրեն» կապերի պտուղն էր: Ամբողջ Իտալիան ոտի կանգնեց: Կաթոլիկ եկեղեցին ազում էր Ֆաուստո Կոպիի կնությունը չեղյալ հայտարարել: Մարգարեները գայրացել էին, որ campionissimo-ն սիրային կապերի դաստիարակ սկսել էր վաս արդյունքներ ցույց տալ, ոմանք դաստիարակում էին «սիրո իրավունքը», մյուսներ գայրույթ արտահայտում անօրեն կապի համար. «Ինչպես կարող է ամուսնացած եւ այլ ժողովրդի կողմից սիրված մի մարդ նման «հանցանք» գործել», հայտարարում էին վերջիններս:

Բայց սերը երկար չտեւեց: Մի քանի տարի անց Ֆաուստո Կոպին, վերադարձելով Աֆրիկա կատարած ուղեւորությունից, շատ կարճ ժամանակում սենսացիոնաբեն վախճանվեց: Ողջ Իտալիան ոտի մեջ էր: Բոլորը Ջուլիա Օկինիին մեղադրում էին համարում: Իտալիայում նրա կրանին անտանելի էր դարձել: Ֆաուստինոյի հետ Ջուլիան հեռացավ երկրից ապաստան գտնելով Բուենոս Այրեսում: Արգենտինայի այն ժամանակվա նախագահ Խուան Պերոնը, որը հեծանվավազքի սիրահար էր, ընդունեց նրանց: Ջուլիա Օկինին որոշ ժամանակ անց վերադարձավ Իտալիա: Նա

Ֆաուստո Կոպին, Ջուլիան եւ Ֆաուստինոն

մի քանի օր անցկացրեց բանտում «անձնական օգտակար լուծ» լինելու հանցանքով: Օկինին աղում էր հուշերով: Ժողովուրդը նրան «դրոնիկ էր» համարում: 1993-ի հունվարին Ջուլիա Օկինին մահացավ: Իր կենդանության օրոք Օկինին արգելում էր Կոպիի կյանքի մասին ֆիլմ նկարահանել: Ջուլիայի մահից հետո սկսվեցին ֆիլմի նկարահանումներ: Ջուլիա Օկինիի դերում խաղում է հանրահայտ դերասանուհի Օռնելա Մուտին: «Ուզում եմ, որ ինձ նման դեր է վստահվել», հայտարարեց Օռնելա Մուտին:

Ֆաուստո Կոպիի սիրային կյանքի մասին շատ ինչ գրվում է գրվել, բայց ամբողջ Իտալիան հիշում է այդ դաստմությունը: Այսօր «Մեծն Ֆաուստո» ֆիլմը Ֆաուստո Կոպիի եւ Ջուլիա Օկինիի սիրո ռոմանտիկ էջերը մեջտեղ է բերել:

ԽԾԱՆԿԱՐ

Ձմեռային առաջնությունը Փարիզում

Գյոթեբորգում տեղի ունեցած բեռնատլետիկայի միջազգային ֆեդերացիայի ղեկավար խորհրդի նիստում Փարիզը ընտրվեց 1997-ի աշխարհի առաջնության մրցավայր: Իտալական Միլան խաղում կանցկացվեն 1996-ի Մեծ մրցանակի խաղարկության եզրափակիչի մրցումները: Այսպիսով, Փարիզը փաստորեն փոխարինեց Աթենքին, որը ավելի վաղ ընտրվել էր ձմեռային խաղերի մայրաքաղաք: Սակայն, հանի որ միջազգային ֆեդերացիայի որոշմամբ այստեղ դեռեւ է անցկացվեր նաեւ աշխարհի ամառային առաջնությունը, Աթենքը իմքրսիմքյան հանել էր իր թեկնածությունը:

Փաստ

Մեկնեցին Շվեդիա

Շվեդական Գյոթեբորգ քաղաքում օգոստոսի 4-ին մեկնարկող բեռնատլետիկայի աշխարհի առաջնությանը մասնակցելու համար, Երեւանից Շվեդիա մեկնեց Հայաստանի դասվիրակությունը, որի կազմում են գյուղերի մարզիկ Արմեն Մարտիրոսյանը եւ Երեւանի բեռնատլետիկայի մասնագիտացված դպրոցի տնօրեն Սարգիս Խալաթյանը: Մեր մյուս մարզիկը՝ Ռոբերտ Եմմիյանը Գյոթեբորգ կժամանի Ֆրանսիայից: Շվեդիայում է գտնվում նաեւ մարզաձեւի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Վալերի Վասիլյենկոն, որը մասնակցեց բեռնատլետիկայի միջազգային ֆեդերացիայի (ԻԱԱՖ) կոնգրեսի աշխատանքներին:

Արմենպրես

Ռոբերտո Բաջջո. «Յուվենտուսը տգեղ վարվեց»

Իտալական ֆուտբոլի «գերաստղ» Ռոբերտո Բաջջոն իտալական լրագրողներին տված հարցազրույցի ժամանակ ասել է, թե «Յուվենտուսի» ղեկավարությունն իր հետ տգեղ վարվեց, ցանկանալով մեկ երրորդով կրճատել նա խորհ պայմանավորված աշխատավարձը: Ինչպես հաղորդում է անգլիական մարզական մամուլը, «Յուվենտուս» ակումբի եւ «Ֆիաս» հանրահայտ ավտոկոնցեռնի նախագահ Ջովաննի Անյելլին հայտարարել է, որ այսուհետ ակումբը գործելու է խիստ խնայողության սկզբունքով եւ չի կարող մի խաղացողի թեկուզ եւ Բաջջոյին, վճարել այն գումարը, որը նա ստանում էր մինչ այդ: Եւ եթե Բաջջոն ցանկանում է մնալ «Յուվենտուսում», ապա պետք է համաձայնի աշխատավարձի կրճատմանը: Սակայն Բաջջոն չցանկացավ եւ, հեռանալով բիմից, ավելի ձեռնտու պայմանագիր կնքեց իտալական մեկ այլ հանրահայտ ակումբի «Միլանի» հետ: Բաջջոն ասել է, որ շատ գոհ է իր նոր պայմանագրից:

Արմենպրես

ՔԱՂԱՔԱԳՐԵՐ

Հեծանվային սպորտը վտանգավոր մարզաձեւ է

Հեծանվային սպորտն իրոք վտանգավոր մարզաձեւ է:

Սիա մինչեւ հիմա արձանագրված հեծանվորդների հետ պատահած մահացու դեպքերը.

1935-ի հուլիսի 11-ին խաղանացի Ֆրանչեսկո Մեդեդան «Տուր դը Ֆրանսի» մրցումների ժամանակ գլորվում է ձորը: Նրա գանգուղեղը ճնշվում է: Երեք օր անց Ֆրանչեսկո Մեդեդան մահանում է Գրենոբլի հիվանդանոցում:

1937-ի մարտի 23-ին աշխարհի չեմպիոն ֆրանսիացի Անդրե Ռեյնը զոհվում է Բելգիայի Անտվերպեն քաղաքում տեղի ունեցած հեծանվավազքի ժամանակ:

1950-ի հունիսի 18-ին ֆրանսիացի Կամիլ Դանգիոնը իր երկրի առաջնության ժամանակ ուժգնորեն հարվածում է կողից ընթացող մոտոցիկլին: 8 օր անց նա մահանում է:

1951-ի հունիսի 28-ին իտալացի Սերսե Կոպին հանրահայտ Ֆաուստո Կոպիի եղբայրը Իտալիայում տեղի ունեցած հեծանվավազքի վերջնագծից 1 կմ առաջ ընկնում է: Բայց նա նորից նստում է հեծանվին եւ շարունակում մրցավազքը, հասնում վերջնագծին: Պարզվում է, որ Սերսե Կոպին ուղեղի լուրջ վնասվածք է ստացել եւ նա մահանում է նույն գիշեր:

1956-ի սեպտեմբերի 29-ին բելգիացի Ստան Օկկերսը խնդրային հեծանվավազքի 1955 թ. աշխարհի չեմպիոնը ընկնում է Անտվերպենի հեծանվահրապարակում: Երկու օր հետո նա նույնպես մահանում է:

1967-ի հուլիսի 13-ին անգլիացի Թոմ Սիմփսոնը խնդրային հեծանվավազքի 1965 թ. աշխարհի չեմպիոնը «Տուր դը Ֆրանսի» մրցումների ժամանակ Վանտու լեռը բարձրանալիս տրի տագնապ է ունենում, ինչից էլ մահանում է:

1969-ի օգոստոսի 25-ին ֆրանսիացի Ժորժ Սանդերը Բելգիայում տեղի ունեցած մրցումների ժամանակ նաեւ պարահիկ հեծանվով հարվածում է մի բերդ վանատոնի, որը գանգի լուրջ վնասվածք ստանալով, մահանում է հիսդ օր հետո:

1971-ի մարտի 15-ին բելգիացի Ժան Պիեռ Մոնսերեն, որը նախորդ մրցաշրջանում նվաճել էր խնդրային հեծանվավազքի աշխարհի չեմպիոնի տիտղոսը, Ռեստի քաղաքի (Բելգիա) «Մեծ մրցանակի» մրցումներում հարվածում է հակառակ ուղղությամբ ընթացող մի մեքենայի եւ տեղնուտեղը մահանում:

1972-ի փետրվարի 13-ին Անդալուզիայի մրցումներում (Իսպանիա) իտալացի Մանուել Գալերոսն ընկնում է եւ մահանում:

1976-ի մայիսի 20-ին իտալացի Խուան Մանուել Սանչեսը Իտալիայում տեղի ունեցած մրցումների առաջին իսկ փուլում հարվածում է ճանապարհի եզրին տեղակայված մեքենայի ոտին: Նրա գանգը վնասվում է: Խուան Մանուել Սանչեսը մահանում է:

1984-ի ապրիլի 30-ին դրոհազգացի Ժակիմ Ագուտինոն Պորտուգալիայի Ալգարվե քաղաքի մրցումներում մոտ էր վերջնագծին, երբ մի շուն հարձակվում է նրա վրա: Ագուտինոն ընկնում է եւ վիրավորվելով գանգից, մահանում է սայլի մեջ:

1986-ի մայիսի 12-ին իտալացի Էմիլիո Ռեւազոնն ընկնում է Իտալիայի մրցաշարի առաջին իսկ փուլում: Նա մահանում է 15 օր հետո:

1988-ին հոլանդացի Կոնին Մեյջերը Հոլանդիայի «Գրիսերիում» մրցումների ժամանակ մահանում է արտի արտից:

1995-ի փետրվարին կոլումբիացի երեք հեծանվորդներ Նելսոն Մորան, Ագուստո Տրիանան եւ Հերնան Պասինոն մարզվելու ժամանակ իրար հարվածում են եւ երեքն էլ մահանում:

1995-ի հուլիսի 18-ին Ֆաբիո Կասարտելին մահացավ «Տուր դը Ֆրանսի» մրցումներում:

ԹԵՆԻՍ

Բեկերին հետաքրքրողը ձերբակալվեց

Հայտնի է, որ մեծ բենիսն ամենաեկամտաբեր մարզաձեւերից մեկն է: Այն շատ շահավետ է թե աշխարհի ուժեղագույն բենիսիստների եւ թե բազմաթիվ մրցումներ կազմակերպողների համար: Մրցաշրջանը նոր է հասել հասարակածը, սակայն ավստրիացի Թոմաս Մուստերը հասցրել է վաստակել 1 մլն 735 հազար դոլար: Դա լավագույն ցուցանիշն է: 1 միլիոնից ավելի հոնորարներ են ստացել նաեւ աշխարհի երկու ուժեղագույն բենիսիստները՝ Անդրե Ագասին եւ Փիթ Սամփրասը: Խոսքը գնում է միայն բենիսից ձեռք բերած գումարների մասին: Այս հաշվարկի մեջ չեն մտնում գովազդներից եւ այլ գործարքներից ստացված գումարները:

Թենիսի միջազգային ֆեդերացիայի հրապարակած համաշխարհային դասակարգման ցուցակը կրկին գլխավորում է Անդրե Ագասին: Նրան հաջորդում են Փիթ Սամփրասը, Թոմաս Մուստերը, Բորիս Բեկերը, Մայքլ Չանգը, Եւգենի Կաֆելնիկովը...

Գերմանիայում ձերբակալվել է բենիսի մի սիրահար, որը հետաքրքրում էր Բորիս Բեկերին, սպառնալիքներով նրանից պահանջելով 25 հազար գերմանական մարկ: Հարցաքննության ժամանակ անհայտ «հանցագործը» հայտարարեց. «Ես համոզված էի, որ Բորիս Բեկերը երբեք ոչ մի կոպեկ չի տա»:

ԲԻԶՆԵՍ

Դրամն ամեն ինչ անում է

ԳԵՎՈՐԳ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
Վալանս, Ֆրանսիա

Ճապոնացիները շատ են սիրում «Ֆորմուլա-1»-ի մրցումները: Անցյալ տարի Սուզուկիում տեղի ունեցած Ճապոնիայի «Մեծ մրցանակի» խաղարկության ժամանակ մրցումներին ներկա գտնվել ցանկացողների թիվը հասնում էր տարբ 5 միլիոնի: Բայց միայն 350 հազար տեղ կար մարզահամալիրում վագրաբավի ուղերի տարբ տեղավորված տրիբունաներում: Նման սերը եւ հաջողությունը գրավեց «Գրան պրիներ» կազմակերպողների շահավետ ուշադրությունը: Ավտոմոբիլային սպորտի միջազգային ֆեդերացիայի նախագահ, անգլիացի Մաքս Մոսլեյը եւ ավտոշինարարների միության (FOCA) նախագահ, ամերիկացի Բերնի Էկելստոնն ուրախությամբ համաձայնեցին, որ ճապոնացի մի միլիարդատեր Ճապոնիայում կազմակերպի «Գրան պրիի» երկրորդ մրցաշարը: Ըստ գործող օրենքների, ամեն մի երկիր յուրաքանչյուր տարի իրավունք ունի կազմակերպել «Գրան պրիի» ընդամենը մեկ մրցաշար:

Անցյալ հունիսին FOCA-ն 5 տարվա մի պայմանագիր կնքեց Tanaka International ընկերության հետ: Tanaka-ն ճապոնացի հենց այն միլիարդատերի անունն է, որը ցանկություն է հայտնել կազմակերպել «Մեծ մրցանակի» երկրորդ մրցաշարը Ճապոնիայում, որը միշտ պետք է անցկացվի Ճապոնիայի առաջին «Գրան պրիից» 7 ամիս առաջ: Տանակայի մրցաշարը կրելու է «Խաղաղ օվկիանոսի մեծ մրցանակ» անունը: Այս մրցաշարը տեղի պետք է ունենա Այդա կոչված լեռնային գեղատեսիլ մի բնաշխարհում, որտեղ ամեն ինչ՝ գյուղաքաղաքը եւ համալիրները պատկանում են միլիարդատեր Հաձիմե Տանակային: Այսպիսով Տանական իրականացրեց իր երազը: Այս խոշոր գործարարն իր հարստությունը կուտակել է գոլֆի համալիրներ եւ մարզադաշտեր կառուցելով: 1980 թ. Ֆրանսիայի Լը Ման քաղաքում տեղի ունեցած «24 ժամ» կոչված ավտոարշավները դիտելով Տանական սիրահարվեց այդ մարզաձեւին: Շուտով նա ուզում էր կառուցել իր անձնական մարզադաշտը: 1990-ի հոկտեմբերին ավտոարշավների Տանակայի մարզադաշտը արդեն պատրաստ էր: Այս կառույցի ծառայություններից մշտապես օգտվում են 300 անձինք, որոնցից յուրաքանչյուրն ամեն տարի վճարում է 200 հազար դոլար, որոնցի իրավունք ստանա առանց արգելքների իր ավտոմեքենայով ուղերթներ կատարել այնտեղ եւ ազատորեն օգտվել մարզահամալիրում գտնվող հյուրանոցներից, ռեստորաններից եւ զվարճալի վայրերից: Այդիկի 17-ին «Այդա» մարզադաշտի հյուրերը եղան «Գրան պրիի» աշխարհի ամենամեծերը: Տանակայի ուրախությանը չափ ու սահման չկար: Ով որ ասել է, թե դրամն ամեն ինչ անում է, ճիշտ է ասել:

Թարգմանեց՝
ԱՍՈՒԵՆ ԲԱՐԴԱՍԱՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ՀԱՅԵԼԱՊԱՏ ԴԱՇԼԻՔ

ՕԳՈՍՏՈՍԻ
3-ից 9-Ը
ՍԿԻԶԲԸ ԺԱՄԸ
21.00

ԱՐՄԵՆԻԱ
ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԴԻՈ

ՇՈՒՐ ԾՐԱԳԻՐ

«Մոսկովյան աստղեր»

Star's Express բալետային խմբի եւ Յուրմալայի երգի փառատոնի մենակատարների մասնակցությամբ
Ծրագրի արժեքի մեջ մտնում է աղանդերային ճաշացանկ
Լրացուցիչ տեղեկություններ
525393

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Ակի» հյուրանոցի առաջին հարկի նախասրահի կողակում վաճառվում են կոմպակտ դիսկետներ (CD):
Հեռ. 594378

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՆՆՋԱՍԵՆՅԱԿԻ չօգտագործված կահույք «ԼՅՈՒԴՈՎԻԿՈՍ-XIII» (սպիտակ գույնի): Գինը բուկայականից էժան: Զանգահարել 581841:

«ՍԱՆՏՈՒՐՍ»
ֆիրման առաջարկում է

10 ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՕՐ ԿԻՊՐՈՍՈՒՄ

Բուլղարական «ՍԱՆՏՈՒՐՍ» ֆիրման յուրաքանչյուր 10 օրը մեկ կազմակերպում է ուղիղ թռիչք
ԵՐԵՎԱՆ - ԼԱՌՆԱԿԱ (Կիպրոս):

Զբոսաշրջիկների խմբերը արդեն հանգստանում են արեւաշող Կիպրոս կղզում

Առաջիկա թռիչքները՝ օգոստոսի 6,15,24-ին:

Բարձրակարգ հյուրանոց
(ծովից 100մ հեռավորության վրա)
Երկրլեղանոց համարներ (հեռախոս, հեռուստացույց, սառնարան, խոհանոց)
3-օրյա էքսկուրսիա ՊՈՐՏ - ՍԱՅԻԴ (Եգիպտոս) եւ ԵՐՈՒՍԱՂԵՄ կիպրական օվկիանոսային «Ատլանտիս» ջերմանավով:
Ուղեգրի արժեքը $460 + 96.000 դր.

Ֆիրման առաջարկում է նաեւ 2-շաբաթյա հանգիստ Բուլղարիայի «Զոլոտին Պեսկի» ծովափում ($300 + 120.600դր.) եւ մասնավոր վիլլաներ Նեսեբր առողջարանում ($420):

Վճարումը՝ համարժեք դրամով, կանխիկ կամ փոխանցումով

«ԱՆԻ» հյուրանոց, 512, 523, 530 սենյակ
Հ.Պարոնյանի փ. 1 (Ձկան խանութի դիմաց)
եւ Դ. Փարպեցու 22 (նախկին Դուկասյան)
Հեռ. 52-42-65, 59-45-12, 53-15-00, 59-45-23, 56-51-08

Երեւանի «Հրաչյա Աճառյան» համալսարանը կաստարում է 1995-96 ուսարվա ընդունելություն հետեւյալ ֆակուլտետներում

◇ Միջազգային հարաբերություններ եւ բարգմանչություն ◇ Միջազգային իրավունք ◇ Միջազգային տնտեսական հարաբերություններ ◇ Միջազգային ինֆորմացիա եւ բարգմանչություն ◇ Պարտից լեզու, գրականություն եւ բարգմանչություն ◇ Իրավագիտություն ◇ Մենեջմենթ եւ մարկետինգ ◇ Բանասիրական ◇ Պատմություն եւ աշխարհագրություն ◇ Մանկավարժություն եւ տարրական կրթության մեթոդիկա ◇ Նախադպրոցական մանկավարժություն եւ հոգեբանություն ◇ Բիմիա եւ կենսաբանություն ◇ Դեֆեկտոլոգիա ◇ Կիրառական մաթեմատիկա:

Ընդունելությունը կաստարվում է մրցութային կարգով:

Ուսման տեւողությունը մանկավարժության եւ տարրական կրթության մեթոդիկայի, նախադպրոցական մանկավարժության եւ հոգեբանության ու դեֆեկտոլոգիայի ֆակուլտետներում չորս տարի է, մյուս ֆակուլտետներում՝ հինգ տարի: Համալսարանը կնվիրած դիպլոմանպարեր հիման վրա կարող է գերազանցիկ ուսանողներին եւ նրանց ընտանիքի անդամներին ողջակիզ տվյալներ, իսկ երիտասարդ դասախոսներին վերապատրաստման Միլանի, Փարիզի, Մարսելի, Արեմի, Սպոնիկի, Թեհրանի եւ Վառնայի համալսարաններ, Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտ:

Դիմորդները ոչնչ է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը. միջնակարգ կրթության վկայական, միջնակարգ մասնագիտական կրթության դիպլոմ, տեղեկանք առողջության մասին, վեց լուսանկար (3x4 սմ չափի):

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ սեպտեմբերի 2-ը. քննությունները կանցկացվեն սեպտեմբերի 3-ից 10-ը: Համալսարանի հասցեն՝ Ակիմ Մանուկյան (նախկին Մոսվյան) 13: Հեռախոսներ՝ 55-67-90, 55-46-80:

ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարության կողմից արտոնագիր թիվ 009) «Ցավախմ» մասնագիտացված վարժարանը կաստարում է 1995-96 ուսարվա ընդունելություն 9-րդ եւ 10-րդ դասարաններում հետեւյալ մասնագիտացված խմբերում

1. Բնագիտական առարկաների բաժանմունքում
ա) մաթեմատիկա, ֆիզիկա, հայոց լեզու, բ) մաթեմատիկա, օտար լեզու, հայոց լեզու, գ) քիմիա, կենսաբանություն, հայոց լեզու, դ) մաթեմատիկա, աշխարհագրություն, հայոց լեզու, ե) մաթեմատիկա, կենսաբանություն, հայոց լեզու, զ) ֆիզիկա, կենսաբանություն, հայոց լեզու
2. Հումանիտար առարկաների բաժանմունքում
ա) հայոց լեզու եւ գրական (բանավոր), օտար լեզու, բ) պատմություն, հայոց լեզու, օտար լեզու, գ) ռուսաց լեզու եւ գրական (բանավոր), օտար լեզու, դ) օտար լեզու (գրավոր, բանավոր), հայոց լեզու

Ընդունելությունը կաստարվում է հարցազրույցի ձեւով: Շրջանավարտները կստանան քիվ միջնակարգ կրթության վկայականներ, որը հանդիսանալ է հանրակրթական դպրոցների հասունության ատեստատին: Ընդունվելու համար դիմել ընդունող հանձնաժողովին, որը տեղակայված է Նորքի 5-րդ զանգվածում գտնվող շինարարական ֆոլեջի շենքում: Պահանջվում են հետեւյալ փաստաթղթերը
1. դիմում, 2. 8-րդ կամ 9-րդ դասարանի ավարտական վկայականը, 3. 2 լուսանկար (3x4 չափի):
Ուսուցումը վճարովի է, ուսման վարձի չափը պայմանագրային: Յուրաքանչյուր խմբում 15-20 հոգի: Մանրամասն տեղեկություններ հանար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարներով՝ 64 30 53, 63 54 47, 61 06 45, 47 39 86, 48 03 33
Փաստաթղթերը ընդունվում են ժամը 10:00-ից մինչեւ 17:00, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Հայտարարություն

Ակադ. Հ. Մանանդյանի անվ. մանկավարժական ինստիտուտը հայտարարում է 1995-96 ուսարվա ընդունելություն հետեւյալ մասնագիտություններով՝
1. Բնագիտական առարկաների ֆակուլտետի հետեւյալ բաժիններում.
ա) մաթեմատիկա, բ) ֆիզիկա, գ) քիմիա, դ) կենսաբանություն, ե) աշխարհագրություն, զ) կիրառական մաթեմատիկա (ինֆորմատիկա եւ ծրագրավորում)
2. Հումանիտար առարկաների ֆակուլտետում՝
ա) հայոց լեզու եւ գրականություն, բ) ռուսաց լեզու եւ գրականություն, գ) պատմություն (նեղ մասնագիտացումը՝ հայ ժող. պատմություն), դ) անգլերեն (բարգմանչական), ե) անգլերեն (մանկավարժություն), զ) ֆրանսերեն (մանկավարժություն)

Բոլոր մասնագիտությունների գծով ուսման տեւողությունը 4 (չորս) տարի է: Շրջանավարտները կստանան ուսուցչի որակավորում (բացի անգլերենի բարգմանչականից):

Գերազանց առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները հինգ կանում կնեղավորվեն ինստիտուտում՝ ասիստենտների հաստիքով, իսկ մնացածները ուսուցչական աշխատանքի կնշանակվեն ինստիտուտին կից գործող «Ցավախմ» մասնագիտացված վարժարանում, «Աբիտուրիենտ» կրթաշխատում եւ նրանց մասնաճյուղերում: Բոլոր ուսանողները ուսման ընթացքում կստանան կրթաթոշակ 3-ից 5 հազար դրամի սահմաններում: Կարիքավորները կնեղավորվեն հանրակացարաններում: Ուսումնադաստիարակչական գործունեությունները կանցկացվեն վերոհիշյալ կրթաշխատներում, իսկ բարգմանչական բաժնի 4-րդ կուրսի ուսանողներինը՝ ԱՄՆ-ում կամ Անգլիայում: Բոլոր մասնագիտությունների գծով ընդունելությունը կաստարվելու է հարցազրույցի ձեւով, որի ընթացքում բացահայտվելու են դիմորդի ընդունակությունները, ունակությունները եւ տրամաբանական մտածողությունը, հանգիստ ինստիտուտի առանձնահատկություններից ելնելով, համապատասխան պատասխան տվելու է ինստիտուտի ուսուցման գործընթացում:

Ուսուցումը վճարովի է, ուսման վարձը՝ պայմանագրային: Մանրամասն տեղեկությունների համար դիմել հետեւյալ հասցեով՝ Նոր Նորքի 5-րդ զանգվածի, Մասի 17/1 շենք (Շինարարական ֆոլեջի շենք) կամ զանգահարել հետեւյալ հեռախոսահամարներով՝ 64 10 26, 63 54 47, 61 06 45, 48 03 33, 64 30 53, 47 39 86:

Փաստաթղթերը ընդունվում են օգոստոսի 5-ից մինչեւ սեպտեմբերի 20-ը, ամեն օր ժամը 10:00-17:00, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

ԼՈՒԾԱՐՎՈՒՄ Է

Ս.Ա.Գ. սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

NAAVI ավիաընկերությունը

կազմակերպում է ուղեւորություն ուղիղ չվերթով ԿԱՍՈՎԻՑԵ (Լեհաստան) առեւտրաարդյունաբերական քաղաք օգոստոսի 8-ից - 11-ը

Դուք կունենաք եզակի հնարավորություն ներկա լինել գավաթակիրների գավաթի խաղարկության մրցամարտին «Արարատի» մասնակցությամբ



QUALIFIED APPLICANTS WANTED

USAID/Caucasus, Yerevan seeks qualified candidates for the following positions:

1. General Services Specialist

The General Services Specialist performs, manages and supervises general services support to USAID/Caucasus. This includes, but is not limited to, maintenance and repair of physical USAID leased residences and the office, oversight of property management, oversight of the Mission motorpool, oversight of procurement systems and computer support. The successful candidate will have excellent English skills, be computer literate (Word Perfect, Lotus 123, DBase), have knowledge of construction trades, mechanics, management skills and be able to work under pressure.

2. Senior Grade Secretary

Duties of a secretary at the senior grade include typing correspondence, filing, answering telephones, maintaining the AID Rep's calendar and assisting in protocol functions. The successful candidate will have excellent English skills, be experienced in office operations, have a working knowledge of Word Perfect, and Lotus 123, and be able to type 50 words per minute.

3. Procurement Assistant

The procurement assistant is responsible for the management of USAID/Caucasus' procurement systems. Responsibilities of the position include maintenance of the procurement files, preparing purchase orders, vouchers for payment and corresponding with vendors. The successful candidate will have excellent English skills, be able to use Word Perfect and Lotus 123 and have strong organizational skills.

Qualified individuals who wish to apply for one of these positions should submit a resume and biographical data sheet (available at the USAID Office at 10 Aigedzor), together with any supporting documentation to the USAID Executive Office, 10 Aigedzor Street, no later than August 11, 1995.

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան 23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1911 Տպաքանակը՝ 7000 Ստորագրված է տպագրության 2. 08. 1995 Գինը՝ 50 դրամ

digitised by A.R.A.R.@